

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Նախկինների Կոկորդից «Մարտի 1-ի Գործը» Հանողը

ՊԱՐԳԵՒ ԱՊՐԵՍԵԱՆ

Հրայր Թովմասեանը նախանձեւի վիճակում է: Մի կողմից՝ պաշտօնավարման իր անձնական հարցն է, միւս կողմից՝ Ռոբերտ Քոչարեանի հարցը: Նրան պարբերաբար չի շեղում են, որ ինքը պիտի «չյանձնուի», քանզի առաքելութիւն ունի՝ նախկին իշխանութիւնների կոկորդից մաքրել Մարտի 1-ը: Սա, չգարմանաբ, հենց իր ձեւակերպումն է:

Բայց մինչ այդ չի շեղում են, որ երբ նոր Սահմանադրութեան հեղինակներից մէկին՝ Թովմասեանին, նախկին իշխանութիւնները՝ ի դէմս ՀՀԿ-ի, գործողութիւն ինչ ՄԴ՝ նախագահի պաշտօնում, բազմաթիւ վերլուծութիւններ եղան այն մասին, որ նրա առաջադրման ժամկէտը յատուկ են ընտրել այնպէս, որ դեռեւս նոր Սահմանադրութիւնն ամբողջութեամբ ուժի մէջ մտած չլինէր, որպէսզի հնարաւորութիւն տրուէր այդ ժամանակ արդէն ՀՀԿ-ական դարձած նախկին ընդդիմադիր Թովմասեանին «ընտրուել» հին Սահմանադրութեամբ եւ պաշտօնավարել ոչ թէ 6 տարի ժամկէտով, այլ մինչեւ 65 տարին լրանալը:

Երկրորդ առանցքային հարցը, սակայն, Մարտի 1-ի գործն է եւ Ռոբերտ Քոչարեանին առաջադրուած մեղադրանքը:

Յիշեցնենք, որ դեռ անցած տարի, երբ Քոչարեանին նոր էր մեղադրանք առաջադրուել, իս-

սակցութիւններ կային արդէն, որ քոչարեանական պաշտպանութեան մարտավարութիւնը միտուած է այն բանին, որ գործը «սովորական» դատարանից տանեն ՄԴ՝ Հրայր Թովմասեանի մօտ, եւ նրա ձեռամբ «ջրեն» այդ մեղադրանքը:

Եւ հիմա, ակնյայտ է, որ նախկիններից բոլոր նրանք, ովքեր «սատարում են» Քոչարեանին, հրապարակաւ նետուել են տեղեկատուական դաշտ՝ կոչ անելով Հրայր Թովմասեանին «չյանձնուել»:

Որովհետեւ նրանց համար ոչ թէ Թովմասեանը կամ օրինակաւորութիւնն է կարեւոր, այլ՝ միայն ու միայն Քոչարեանի գործը, եւ նրանք հասկանում են, որ դա իրենց վերջին «շանսն» է, հետեւաբար՝ Թովմասեանը պիտի ամէն գնով կատարի իր առաքելութիւնը:

Հիմա մի փոքր հետ գնանք՝ հեռավոր 2008 թուական:

Այդ ժամանակ ընդդիմադիր «Ժառանգութիւն» կուսակցութիւնից արդէն դուրս եկած եւ միայն որպէս սահմանադրագէտ ներկայացող Հրայր Թովմասեանը մարտիմէկեան սպանդից օրեր անց յայտարարում է.

«Այս իրադարձութիւնների իրական վիճակի պարզաբանումը առաջին հայեցակէտից թուում է, թէ պէտք է քաղաքական ընդդիմութեանը, բայց, իմ կարծիքով, ինքը նոյնչափ կարեւոր է քաղաքական իշխանութեան համար: Քաղաքական իշխանութիւնը չի կարող 5

տարի կամ աւելի կառավարել էն վիճակով, որ օդից կախուած հարցեր մնացին: Այսինքն՝ պէտք է պարզաբանել, վերջակէտ դնել ու երաշխաւորել, որ նման դէպքեր չկրկնուեն: Եթէ մարտեան դէպքերի մանրամասների պարզաբանումը չտրուի, ապա նշանակում է, որ քաղաքական իշխանութիւնը ստիպուած է լինելու առաջիկայ հինգ տարուայ ընթացքում համակերպուել այն մտքի հետ, որ կայ մի երեւոյթ, որը, կոպիտ ասած, իրենց կոկորդին է կանգնել: Դա հասարակութեանը լարուածութեան մէջ է պահելու, հիմք է լինելու ընդդիմութեան համար հանրահաւաքներ անել: Այնպէս որ, եթէ ցանկութիւն կայ այդ մասով ձերբազատուել ու կառավարումն արդիւնաւէտ իրականացնել, ապա, կարծում եմ, որ իշխանութիւններն այդ քայլին պէտք է գնան»:

Մէկ Տարի Անց՝ 2009 թուականին, Թովմասեանը յայտարարում է.

«Մարտի 1-ի դատավարութիւնները ամօթ էին մեր երկրի համար: Մարտի 1-ի դէպքերի լաւագոյն հանգուցալուծումը համաներումը է: Ես գտնում եմ, որ Մարտի 1-ի դէպքերի լաւագոյն լուծումը յարուցուած գործերի կարճումն էր այդ նոյն ժամանակահատուածում: Պատմութիւնը պատասխան պէտք է տայ նաեւ Մարտի 1-ի սպանութիւնների համար»:

Եւ ահա ճակատագրի հեզնանքը: 2011 թուականին Թովմասեանը

նր դառնում է ՀՀԿ կառավարութեան անդամ,

2012-ին՝ Հանրապետական կուսակցութեան անդամ, հեղինակում է Սերժ Սարգսեանի պաշտօնավարումը երկարացնող նոր Սահմանադրութիւնը, 2018-ին ՀՀԿ-ի կողմից որպէս փոխհատուցում՝ գործողութեամբ է Սահմանադրական Դատարան եւ կարգում ՄԴ նախագահ:

Ամբողջ այդ ընթացքում արդէն նրա իշխանութիւնը այդպէս էլ որեւէ բացայայտում չի կատարում Մարտի մէկի գործով, այդ գործը, Թովմասեանի կանխատեսած եղանակով հենց, իրապէս կանգնում է նախկին իշխանութիւնների կոկորդին, եւ միայն 2018-ի յեղափոխութիւնից յետոյ է գործը տեղից շարժուում:

Եւ ահա, անակնկալ՝ հենց գործը տեղից շարժում է, հենց ներկայացուած են մեղադրանքներ, պարզում է, որ նախկինների կոկորդին մնացած գործից նրանց կոկորդը մաքրելու կարիք կայ: Եւ գաւեշտը, պարզում է, որ նախկին իշխանութիւնների կոկորդը մաքրողի դերակատարութիւնը պիտի ստանձնի նա, ով ժամանակին յայտարարում էր, որ չբացայայտելու դէպքում Մարտի 1-ը իշխանութիւնների (նախկին) կոկորդին է մնալու: Ընդ որում, կոկորդը մաքրելու ջատագովութիւնն այս փաստացի վերածուել է մարտիմէկեան ոճրագործների համար փաստաբանութեան, ընդ որում՝ ոչ միայն իրաւական, այլեւ արդէն քաղաքական:

Ըստ էութեան, մարդը, որը պնդում է, թէ ինքն այժմ ՄԴ դատաւոր է եւ նախագահ, իր գործողութիւններով բացայայտ ցոյց է տալիս, որ ինքը ոչ թէ անաչառ դատաւոր է, այլ կողմ: «Ի ԼՈՒՐ»

Վարչապետը Խփել է Թիրախին. Շտապ Եւ Խիստ Քայլեր

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

Հայաստանից պէտք է արմատախիլ արուի քրէական ենթամշակույթը, դատախազութեան օրուայ առիթով ելոյթում յայտարարել է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Քրէական ենթամշակույթը նախորդ իշխող համակարգի կենսագործունէութեան եւ վերարտադրութեան առանցքային բազաներից մէկն էր: Դա իհարկէ գալիս էր դեռեւս խորհրդային շրջանից, երբ այդ ենթամշակույթը դարձեալ ունէր առանցքային նպատակ իշխող համակարգի համար: Պարզապէս, այդ նպատակին ծառայում էր ոչ այն ձեւաչափով ու ռեժիմով, ինչպէս յետխորհրդային Հայաստանում:

Քրէական ենթամշակույթը իՍՂՄ-ում իշխանութեան ձեռքին հանրութեան տարբեր շերտերի կառավարման գործիք էր, միաժամանակ նաեւ այսպէս ասած «այլախոհական գոլորշի» բաց թողնելու միջոց: Միակուսակցական ամբողջատիրական երկրում քրէական ենթամշակույթը հանրային շատ շրջանակների համար դիտուում էր օտար համարուող պետութեան այլընտրանք, հիւսուում էին լեզբները «օրէնքով գողերի», նրանց արդարամտութեան մասին: Հանրութեան զգալի շերտեր դա կուլ էին տալիս:

Յետխորհրդային Հայաստանում քրէական տարրը առանցքային դեր ստանձնեց առաջին ընտրական ցիկլի՝ 1995-96 թուականների ժամանակահատուածում, երբ

իշխանութեան ցածր լեզբիտիմութեան պայմաններում դրուած էր վերարտադրութեան խնդիր: Յետագայում այդ տարրն աւելի ամրապնդուեց, ներգրաւուեց քաղաքական ինստիտուտներ, հանրային բաց շրջանակներ, դառնալով իշխանութեան բազային յենարաններից եւ գործիքներից մէկը:

Դրա իմաստը իՍՂՄ օրինակով այլախոհութեան գոլորշի բաց թողնելը էր: Քրէական տարրը այդ գործառնութիւնը չուներ: Բուն նպատակը այդ ենթամշակույթի արժէհամակարգային տոտալ ազդեցութեան հասնելն էր, ըստ այդմ հանրութեան քաղաքական եւ քաղաքացիական համարժէք վարքագիծ ձեւաւորելն ու վերահսկելը:

Շար.ը էջ 18

Մի Քանի Անգամ Բանտախուց Գնացած Ու Վերադարձած Ընդդիմադիր Ռոբերտ Քոչարեանը Շուտ Մոռացաւ Անցեալը

ԽՍԲԱԳՐԱԿԱՆ «ԺՈՂՈՎՈՒՐԴԻ»

Արդէն մի քանի անգամ բանտախուց գնացած, վերադարձած ու կրկին գնացած ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանը, որ խոստանում էր իր իշխանութեան տարիներին չլինել ՀՀ ամենաերիտասարդ թոշակաւոր, քննադատութիւններ է հնչեցնում, դարձել է ընդդիմադիր գործիչ՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով: Նա մինչ բանտախուց վերադառնալը կրկին բարցադրոյց է տուել եւ ասել, թէ իր իշխանութեան տարիներին դատարանների վրայ իր կողմից երբեւէ ճնշումներ չեն եղել: «Երբեք

չեմ գնացել դատաւորների, թող գտնեն մէկ դատաւոր, որի հետ ընդհանրապէս իմ մօտ հեռախօսով խօսած լինեմ: Կամ թող գտնեն մէկ դատաւորի, որը երբեւիցէ իմ գրասենեակում եղել է: Իմ աշխատակազմից գնացել երբեք չեն եղել, երբեք, բացարձակ սուտ է»: Ինչպէս ասում են, քիչ էր մնում հաւատալինք: Իհարկէ, գուցէ Քոչարեանը ճիշտ է, որ անձամբ որեւէ դատաւորի չի գնացել ու որեւէ մէկի որեւէ բան չի հրահանգել, բայց նոյնիսկ եփած հաւին է պարզ, որ Քոչարեանի անունից ՀՀ նախագահի նստավայրից այնպիսի ինտենսիւթեամբ էին դատարաններին թելադրող գնացել

հնչում, որ ուղղակի «սիրուն չի», երբ այսօր Քոչարեանն ասում է, թէ իր օրօք գնացելով արդարադատութիւն չի եղել: Յիշենք թէկուզ «Վիկիլիքս»-ի գաղտնագրութեանը՝ 2008 թուականի Մարտի 7-ին Սահմանադրական դատարանի անդամ Վալերի Պօղոսեանի՝ ԱՄՆ Պետդեպարտամենտ ուղարկուած նամակը: Ըստ գաղտնագրութեան նամակի՝ Ռոբերտ Քոչարեանը որոշել էր, որ Մարտի 8-ին կայանալիք Սահմանադրական դատարանի լսումները պէտք է աւարտուեն Տէր-Պետրոսեանի բողոքը մերժելով: Նշում էր նաեւ, որ լսումների

Շար.ը էջ 18



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՅՒԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՂԷ ԱՋԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social
 Democratic Hunchakian Party
 of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in
 US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Շար.ը էջ 18

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Խորհրդարանական Ուժերը Քոչարեանի Կալանաւորման մէջ Քաղաքական Դրդապատճառ Չեն Տեսներ

Խորհրդարանական ուժերը 2-րդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի կալանաւորման որոշման մէջ քաղաքական դրդապատճառ չեն տեսներ:

Ընդդիմադիր «Բարգաւաճ Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր, Գազիկ Ծառուկեանի խօսնակ Իւլիսիա Տօնոյեանը կը կարծէ, որ Ռոպերթ Քոչարեանի կալանաւորումը պէտք է դիտարկել իրաւական հարթութեան մէջ: Ընդհանուր առմամբ, ԲՀԿ պատգամաւորները խուսափած են Քոչարեանին առնչուող հարցերուն յստակ պատասխաններ տալէ:

Ընդդիմադիր «Լուսաւոր Հայաստան»-ը նոյնպէս Քոչարեանի գործը կը դիտարկեն իրաւական հարթութեան վրայ, աւելին, ինչպէս նշած է պատգամաւոր Անի Սամսոնեանը, այդ գործը իրենց համար առաջնային նշանակութիւն չունի:

«Մենք քաղաքական հետապնդման տարրեր չենք տեսնում, եւ այս գործը մեզ համար զուտ իրաւական գործընթաց է», - «Ազատութեան» հետ գրուցի ժամանակ ըսած է Անի Սամսոնեանը:

Իշխանական «Իմ քայլ»-ը նոյնպէս, Քոչարեանի կալանաւորման որոշման մէջ, քաղաքական հետապնդում չի տեսներ: Խմբակցութեան պատգամաւոր Աննա Կարապետեանը ըսած է, թէ համաձայն



Ամբաստանեալ Ռոպերթ Քոչարեան

չէ Քոչարեանի դիտարկման հետ, թէ երկրին մէջ ոչ օրէնք կայ եւ ոչ ալ օրինականութիւն:

«Ես գտնում եմ, որ ոչ մի քաղաքական հետապնդում չկայ, գործընթացը տեղի է ունենալու օրինականութեան սահմաններում եւ սահմանադրականութեանը եւ օրէնքներին համապատասխան: Ես կարծում եմ, որ հանրութեան մէջ տասնամեակներ ձգուող ամենահիմնական հանրային պահանջը Մարտի 1-ի գործի բացառատունն է: Մենք բոլորս կը սպասենք այդ բացառատունը», - ընդգծած է «Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւորը:

Գլխաւոր Դատախազը՝ Դատախազութեան Շէնքին Սէջ Գաղտնի Շտապի Գոյութեան Լուրերու Մասին

Գլխաւոր դատախազ Արթուր Դաւթեանը լրագրողներու հետ գրուցի ժամանակ անդրադարձած է Մարտ 1-ի գործով տուժողներու իրաւաշարժողներու ներկայացուցիչ Սեդա Սաֆարեանի այն յայտարարութեան, թէ 2008 թուականի մարտիմէկեան դէպքերու օրերուն Դատախազութեան շէնքին մէջ գործած է գաղտնի շտապ:

«Չգիտեմ՝ ժամանակը կը հերքի, մի հատ շրջենք դատախազութեան շէնքում, տեսնենք ինչ գաղտնիութեան պայմաններ կան: Շէնքը չի փոխուել, գաղտնի հաւաք ստեղծվ՝ հաւանաբար նկատի ունէք, որ չեն իմացել, ոչ թէ յատուկ ու ծածուկ պայմաններ: Դեռեւս յայտնի չէ, եթէ ինձ առաւել եւս քրէական գործով նման տեղեկութիւններ յայտնի դառնան, նրանք, ովքեր ձեր ասած շտապի կազմում դրսեւորել են յանցաւոր վարքագիծ, կը համալրեն մեղադրեալների շարքը», - ըսած է Արթուր Դաւթեանը:

Ան յորդորած է սպասել Մարտ 1-ի գործով հրապարակային դատաքննութեան, որու ժամանակ հանրութեան յայտնի պիտի դառնայ, թէ ուրիշ ինչ զօրամիաւորումներ բերուած են եւ որ զօրամիաւորումները ինչ դերակատարութիւն ունեցած են այդ օրերուն:

«Այդ մեղադրանքի համար էական նշանակութիւն ունենալը հետեւեալն է՝ բանակը ներգրաւ-



Գլխաւոր դատախազ Արթուր Դաւթեան

ուել է: Եւ այդ բանակ ասածը ամենալայն իմաստով ենք հասկանում՝ առանց յստակ տեղակայման կամ նշանակութեան», - աւելցուցած է ան:

Գլխաւոր դատախազը անդրադարձած է նաեւ Սեդա Սաֆարեանի այն յայտարարութեան, թէ Մարտ 1-ի գործերու թիւը 10-էն աւելի եղած է:

«Այս պահի դրութեամբ չունենք դեռ այդպիսի տեղեկութիւն: Դա կարելոր բան է»:

Դաւթեանը նաեւ աւելցուցած է, որ Մարտ 1-ի դէպքերուն օտարերկրեայ ուժերու մասնակցութեան մասին տուեալներ չկան:

Սուրիկ Խաչատրեանի Երեւանեան Շքեղ Առանձնատունը Նոր Միայն Պետական Գրանցում Ստացած է



Սիւնիքի նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրեանի՝ Երեւանի մէջ գտնուող շքեղ առանձնատունը

Սիւնիքի նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրեանի՝ Երեւանի մէջ գտնուող շքեղ առանձնատունը երկու օր առաջ միայն պետական գրանցում ստացած է՝ համապատասխան վճարումներ կատարելով համայնքի պիւտձէ: Մինչ այդ առանձնատունը ապօրինի շինութիւն էր, այս մասին Ազգային ժողովի ամպլիոնէն ըսած է Անշարժ գոյքի քառասորի կոմիտէի պետ Սարգստ Պետրոսեանը:

«Իմ ողջ պաշտօնավարման ընթացքում միակ անգամը, որ չեմ դիմացել գալթակողութեանը եւ արտաչալուել եմ նախկին պաշտօնեաների մասին, հենց այս գոյքի մասին է, որը գրանցուեց 2 օր առաջ՝ համապատասխան վճարումներ կատարելով համայնքի պիւտձէ: Մինչեւ այդ պահը դա ինքնակամ շինութիւն էր համարուում: Ես չեմ, որ պէտք է ասեմ, թէ ինչ պէտք է կատարուի այդ գոյքի հետ, բայց

մենք մեր լիազօրութիւնների շրջանակներում պատրաստ ենք աշակցել այն իրաւական որոշմանը, որը կը կայացուի այդ գոյքի ապագայ ճակատագրի հետ կապուած», - ըսած է Սարգստ Պետրոսեանը՝ պատասխանելով Լուսաւոր Հայաստան խմբակցութեան Արման Պապաճանեանի հարցին:

Պապաճանեանը հետաքրքրուած է՝ Ազատութեան պողոտայի եւ Պապայեան փողոցի յայտնի դղեակներու ճակատագիրը ինչ պէտք է ըլլայ: Ըստ պատգամաւորի՝ հանրային սեփականութիւն համարուող տարածքը ապօրինաբար խլուած է երեւանցիներէն, ինչպէս պիտի հանգուցալուծուի այս հարցը:

Սարգստ Պետրոսեանը ի պատասխան ըսած է, - մենք կը բացայայտեն այդ գործընթացների օրինակաւորութիւնը եւ կը կարողանանք պատշաճ գնահատական տալ»:

ՅՔԾ Պետը Ոչ Հաստատած է, Ոչ Ալ Հերքած՝ Արցախի Նախագահի Հարցաքննութիւնը

Յատուկ քննչական ծառայութեան պետ Սասուն Խաչատրեան անդրադառնալով հարցին, թէ ճիշդ են արդեօք տեղեկութիւնները, որ Մարտ մէկի գործի շրջանակէն ներս հարցաքննուած է նաեւ Արցախի նախագահ Բախո Սահակեանը, պատասխանած է՝ «Ոչ հաստատում եմ, ոչ էլ հերքում եմ»:

Նոր հակակաշառակերային մարմնի ստեղծումը կ'ենթադրէ Յատուկ քննչական ծառայութեան (ՅՔԾ) լուծարում, յայտարարած է ՅՔԾ պետ Սասուն Խաչատրեանը՝ պատասխանելով լրագրողներու հարցին, թէ իրականութեան կը համապատասխանե՞ն տեղեկութիւնները, թէ հնարաւոր է յառաջիկա-

յին Յատուկ քննչական ծառայութիւնը լուծարուի:

«E-draft կայքում արդէն հրապարակուել է հակակաշառակերային ռազմավարութիւնը՝ նախագիծը, այդ նախագիծը, որ կարգաք, ուսումնասիրէք, կը տեսնէք, որ նոր հակակաշառակերային մարմնի ստեղծումը ենթադրում է Յատուկ քննչական ծառայութեան լուծարում, բայց դեռեւս դա նախագիծ է, - ըսած է Խաչատրեանը:

Հարցին, թէ հնարաւոր է նոր ստեղծուելիք կառուցը ինքը դեկավարէ, ՅՔԾ պետը պատասխանած է. - «Ճիշդ չէ՝ ես նման բաների մասին հիմա խօսեմ, որովհետեւ էդ հարցը ես չեմ լուծում»:

Կառավարութիւնը Ընդունած է Նուագագոյն Աշխատավարձը 55 Հազար Դրամէն 68 Հազար Դրամ Ելու Նախագիծը

Կառավարութիւնը որոշած է հաւանութիւն տալ «Նուագագոյն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրէնքին մէջ փոփոխութիւններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետութեան օրէնքի նախագիծին:

Զեկուցող Գեմաֆին Գասպարեան ներկայացուցած է ԱԺ «Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւորներ վարագողատ Կարապետեանի եւ Բաբէկէն Թունեանի ներկայացուցած նախագիծը, որով կ'առաջարկուի նուագագոյն աշխատավարձի չափը սահմանել 55 հազար դրամի փոխարէն 63 հազար, երբ կառավարութիւնը կ'առաջարկէ՝ ան ըլլայ 68 հազար դրամ:

Գասպարեան ներկայացուցած է հաշուարկի հիմքերը, ուր կարելոր նկատուած է նուագագոյն սպառողա-

կան զամբիւղը. «Ուղիղ պիտի փոխենք 45 հազար մասնաւոր եւ 35 հազար պետական ոլորտի մէջ աշխատողներու աշխատավարձի չափը, որոնք կը ստանան նուագագոյն աշխատավարձ», - ըսած է ան եւ նշած, որ անոնց աշխատավարձը շուրջ 23-24 տոկոսով պիտի աւելնայ:

Վարչապետը նշած է, որ ստղանցքները բաւականին մեծ են յատկապէս մասնաւոր ոլորտին մէջ: «Պետական կառավարման համակարգին մէջ այն յստակ կը բարձրանայ, իսկ մասնաւոր ոլորտին մէջ պէտք է իսկապէս կարգաւորումները այնպէս ընել, որ իրականութեան մէջ բարձրանայ այդ աշխատավարձը», - ըսած է Փաշինեանը:

Կառավարութիւնը նախագիծը պիտի ուղարկէ Ազգային ժողով՝ հաստատման:

ԼՈՒՐԵՐ

«Չեմ կարծեր, Որ Հայաստանի Մեջ Տեղի Ունենար Յեղափոխութիւն, Եթէ Բարեփոխումները Իրապէս Կատարուէին»- Ամերիկացի Փորձագէտ

Միջազգային կազմակերպութիւնները կրնան միայն առաջարկել անցումային արդարադատութեան միջոցներ: Այս մասին «Ամերիկայի Ձայն»-ի հետ զրոյցի ժամանակ նշած է Նիւ Եորքի մէջ գործող Անցումային արդարադատութեան միջազգային կեդրոնի ծրագիրներու տնօրէն Աննա Միրիամ Ռոքաթելլօն:



Անցումային արդարադատութեան կեդրոնի ծրագիրներու տնօրէն Աննա Միրիամ Ռոքաթելլօ

«Շատերը այն կը դիտարկեն անցեալին տեղի ունեցած կաշառակերութեան դէպքերու, հանրային միջոցներու չարաշահումներու, վիճելի սեփականաշնորհման եւ բռնազրաւումներու դէպքերու ծիրէն ներս, որոնք կ'անհանգստացնեն հայ հասարակութիւնը եւ կը կարծեմ այս հարցերը պէտք է հասցէագրուին», - նշած է ան:

Միեւնոյն ժամանակ, միջոցներու ընտրութիւնը պէտք է որոշէ Հայաստանի հասարակութիւնն ու գործող իշխանութիւնները՝ լայն քանակութեամբ արդիւնքով, կը նշէ փորձագէտը: Միջազգային հանրութիւնը այս հարցի վերաբերեալ առաջարկողի դերի մէջ է. «Չեմ կարծեր, որ եւէ միջազգային կառավարական, թէ հասարակական կազմակերպութիւն, ուղղակի աշխատավարձ պիտի վճարէ Հայաստանի պետական ծառայողներուն»:

Այնուամենայնիւ, Հայաստանին ամէն պարագայի անհրաժեշտ պիտի ըլլայ միջազգային կառուցներու, առաջին հերթին՝ Եւրոմիութեան օգնութիւնը, յատկապէս, որ հայկական կողմը կը ցանկայ վերադարձնել երկրէն ապօրինի դուրս բերուած միջոցները, մանրամասնած է Կեդրոնի աւագ փորձագէտ Ռուբէն Կառուանզան, որ վերջերս անձամբ Հայաստան այցելած է անցումային արդարադատութեան գործընթացի մշակման աջակցելու նպատակով:

«Փտածութիւնը, այդ շարքին պետական միջոցներու չարաշահումը, հիմնական խնդիրն է, որ անցումային արդարադատութիւնը պէտք է արձագանգէ: Սա կրնայ կատարուիլ քանի մը միջոցով, այդ շարքին՝ դատաիրաւական համակարգի վեթիկի միջոցով: Նաեւ տարբերակ է անցեալ 10 տարիներուն կամ՝ Խորհրդային Միութեան փլուզումէն ի վեր տեղի ունեցած

մարդու իրաւունքներու խախտումներու հետաքննութիւնը: Այս գործին մէջ առաջ կու գայ արդարութեան յանձնաժողովի ստեղծման հարցը, որ ոչ այնքան վճիռներ կը կայացնէ, որքան՝ կը դիտարկէ համակարգային խնդիրները»:

Անդրադառնալով դատական համակարգի աստիճանական փոփոխութիւններու կողմնակիցներուն, փորձագէտը յիշեցուցած է, որ Հայաստանի մէջ վերջին տասնամեակներուն դատաիրաւական համակարգի անցումային փոփոխութիւններու քանի մը փորձ եղած է, որոնք սակայն արդիւնք չեն տուած. «Թերեւս, հարցնենք Հայաստանի քաղաքացիներուն՝ ինչ եղան այդ աստիճանական քայլերը, այդ դանդաղ, փաստաթուղթերու վրայ գեղեցիկ գրուած առաջարկներն ու բարեփոխումները, որոնք կոչուած էին վերջ դնելու կաշառակերութեան, մարդոց մօտ հաւատ ներշնչելու դատական իշխանութեան նկատմամբ: Չեմ կարծեր, որ Հայաստանի մէջ, յեղափոխութիւն տեղի ունենար, եթէ այդ քայլ առ քայլ բարեփոխումները իրականութեան մէջ գործէին»:

Փորձագետները նշած են, որ անցումային արդարադատութիւնը բնորոշ է ոչ միայն ծանրագոյն փորձութիւններու եւ պատերազմէ անցած պետութիւններու համար այլեւ՝ կ'իրականացուի, երբ երկրին մէջ կտրուկ փոփոխութիւն տեղի ունեցած է եւ հասարակութիւնը այլեւս չի ցանկար տասնամեակներ սպասել խոստացուած փոփոխութիւններուն:

Հայաստանի Տնտեսութիւնը կը Շարունակէ Արձանագրել Բարձր Աշխոյժութեան Ցուցանիշ. Փաշինեան

Հայաստանը կը շարունակէ գտնուիլ տնտեսական բաւականին բարձր աշխոյժութեան ցուցանիշի վրայ, Կառավարութեան նիստի ընթացքին յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Վարչապետը արձանագրած է որ, Հայաստանը արտահանման հետ կապուած խնդիրները յաղթահարած է եւ Հայաստանի տնտեսական համակարգը ընկալած է տնտեսական յեղափոխութեան վերաբերեալ Կառավարութեան պատգամները:

«Այս տարուայ Մայիսին արձանագրուել է 7,3 տոկոս տնտեսական աշխոյժութեան ցուցանիշ: Ուզում եմ արձանագրել, որ այս տարուայ Մայիսին նախորդ տարուայ Մայիսի նկատմամբ ունեցել ենք արտահանման 15 տոկոսանոց աճ, իսկ Յունուար-Մայիսին նախորդ տարուայ Յունուար Մայիսի նկատմամբ ունեցել ենք 0,1 տոկոսանոց աճ, ինչը նշանակուած է, որ մենք այս տարի արտահանման հետ կապուած խնդիրները յաղթահարել ենք», - ըսած է Փաշինեան:

«Պելառուս Միշտ Պատրաստ Է Ձեր Առջեւ Իր Դռները Բանալու»: Արմէն Սարգսեան Մինսքի Մէջ Հանդիպած Է Լուքաշենքոյի Հետ



Նախագահներ՝ Արմէն Սարգսեանի եւ Ալեքսանտր Լուքաշենքո Մինսկի մէջ կայացած հանդիպման ընթացքին

Մինսքի մէջ կայացած է Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեանի եւ Պելառուսիայի նախագահ Ալեքսանտր Լուքաշենքոյի հանդիպումը:

Հայաստանի հետ բացարձակապէս փակ թեմաներ չկան, հանդիպման ընթացքին ըսած է Լուքաշենքոն՝ աւելցնելով՝ Պելառուսիան միշտ պատրաստ է Հայաստանի առաջեւ բանալու դռները:

Ըստ նախագահի պաշտօնական կայքէջի, Լուքաշենքոն տեղեկացուցած է, որ մինչ հանդիպումը հեռախօսազրոյց ունեցած է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ: «Ան զանգած էր ինձի՝ Սինկափուր ալցէն առաջ եւ ինչորած առաջին հերթին ողջոյնները փոխանցել նախագահին, ինչին ի պատասխան ես ըսի, որ մենք մտադիր չենք անոր շտապեցնել վերադառնալ Հայաստան, յատկապէս որ ան զբաղուած է Հայաստանի համար կարեւոր գործով», - ըսած է Պելառուսիայի նախագահը:

Խօսելով երկու երկիրներու համագործակցութեան մասին՝ նախագահ Լուքաշենքոն ըսած է. - «Այսօր մենք թէպէտ մեծ ապրանքաշրջանառութիւն չունինք, սակայն տարեկան 50 միլիոն ԱՄՆ տոլարի առեւտուր ընելը վատ չարժ է, եթէ այն համեմատենք նախկին ցուցանիշներու հետ: Գազիկ Մառուկեանի ընկերութեան հետ մենք կազմակերպած ենք հայ-

պելառուսական առեւտուրի տան աշխատանքը, եւ ինչպէս ինձ գեղուցած են, Պելառուսիոյ եւ Հայաստանի միջեւ ապրանքաշրջանառութեան 30-40 տոկոսը կ'իրականացուի անոր միջոցով: Այսինքն, մենք արդէն ստեղծած ենք համատեղ ձեռնարկութիւններ ու պատրաստ ենք շարունակել ընթանալ այս ճանապարհով»:

Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեանը շնորհակալութիւն յայտնած է նշանակալի իրադարձութեան՝ Եւրոպական երկրորդ խաղերու փակման արարողութեան մասնակցելու հրաւերի համար եւ նշած.

«Մեծապէս տպաւորուած եմ թէ՛ միջոցառման մաշտապներով, թէ՛ կազմակերպուածութեամբ ու կարգապահութեամբ: Նախկին խորհրդային տարածքին մէջ Պելառուսիան կը շարունակէ յստակ ուղղութիւններով համարուիլ ախոյեան: Այն, ինչ տեսա՞՛ կազմակերպուածութիւնը, կարգապահութիւնը, տպաւորիչ է: Շատ հաւնեցայ այն, որ Պելառուսիան շատ երկիրներէ առաջ է անով, որ հասկացեր է, որ ապագային՝ 21-րդ դարու իրականութիւնն ու համացանցի (վիրտուալ) իրականութիւնը իրար պիտի փոխլրացնեն: Գուք ունիք տեսլական ու իմաստնութիւն՝ նաչելու դէպի ապագան: Առանց ապագայի տեսլականի դժուար է ներկան կառուցել», - մասնաւորապէս ըսած է Արմէն Սարգսեանը:

Թրքական Իշխանութիւնները Ստիպած Են Յետաձգել Պոլսոյ Հայոց Պատրիարքական Տեղապահի Ընտրութիւնները

Պոլսոյ նահանգապետարանը գրութիւն ուղարկած է Պոլսոյ հայոց պատրիարքարան՝ պահանջելով յետաձգել տեղապահի ընտրութիւնները մինչեւ Յուլիս 4ը:

Պոլսոյ հայոց պատրիարքարանի հրապարակած յայտարարութեան մէջ նշուած է, որ Պոլսոյ նահանգապետարանի գրութեան մէջ յետաձգման պատճառ նշուած է նահանգապետարանին մէջ համակարգման հետ կապուած աշխատանքները:

Նշենք, որ Պոլսոյ հայոց պատրիարքարանը ժողով գումարած էր եւ պատրիարքական տեղապահի ընտրութիւններուն շուրջ գրութիւն ուղարկած էր Պոլսոյ նահան-



գապետարան եւ Ներքին գործոց նախարարութիւն:

Հայաստան եւ Ատրպեյճան Փոխանակած են Կալանաւորուած Քաղաքացիներ



Հայաստանի Հանրապետութիւնը, հաւատարիմ մնալով միջազգային մարդասիրական իրաւունքի օրէնքներուն եւ իր ստանձնած միջազգային յանձնառութիւններուն, Կարմիր խաչի միջազգային կոմիտէի (ԿՌՄԿ) օժանդակութեամբ եւ անոր հովանիին տակ իրականացուցած է Մարտ 16-ին ՀՀ պետական սահմանն ապօրինի հատած էլվին Արիֆ Օղլու ի պարահիմովը Ատրպեյճան տեղափոխելու գործընթացը:

ՀՀ ԱԳՆ-էն նաեւ կը յայտնեն, որ Յունիս 28-ին Հայաստանի մէջ ԿՌՄԿ պատուիրակութեան եւ Հայաստանի պատկան մարմիններու ներկայացուցիչներու ուղեկցութեամբ վերոնշեալ անձը յանձնուած է Ատրպեյճանի մէջ ԿՌՄԿ պատուիրակութեան եւ Ատրպեյճանի իշխանութիւններու ներկայացուցիչներուն:

Հայաստանի Հանրապետութիւնը մարդասիրական այս քայլը իրականացուցած է առանց որեւէ նախապայմանի:

Աւելի ուշ նախարարութենէն յայտնեցին, որ Յունիս 28-ին Հայաստանի իշխանութիւններու եւ Հայաստանի մէջ ԿՌՄԿ պատուիրակութեան ներկայացուցիչներուն փոխանցուած է 2017-ի Յունիս 20-ին չբացայայտուած պայմաններու մէջ Ատրպեյճանի տարածքին յայտնուած ՀՀ քաղաքացի Զաւէն Կարապետեանը:

Յիշեցնենք, որ այս տարուան Մարտ 16-ին ժամը 01:30-ի մօտ ՀՀ հիւսիսարեւելեան սահմանագծի մէջ հայ դիրքապահներու կողմէ յայտնաբերուած եւ նախազգուշացուած է ետք վնասագերծուած է ՀՀ պետական սահմանը խախտած Ատրպեյճանի Ղազարի շրջանի բնակիչ, 1986-ին ծնած էլվին Արիֆ Օղլու ի պարահիմովը:

Զաւէն Կարապետեանը սահմանը անցած էր 2017-ին:

ՀՀ Պատգամաւորները Եւսիւ-ի Մէջ Հակադարձած են Ատրպեյճանական Կեղծ Տեղեկութիւններուն

Եւսիւ-ի մէջ Հայաստանի պատուիրակութեան անդամները՝ վեհաժողովի ամառնային նստաշրջանին գուգահեռ ընթացող յարակից ձեռնարկներուն ընթացքին՝ հակադարձած են ատրպեյճանական կեղծ տեղեկութիւններուն եւ ստալոյ յայտարարութիւններուն: Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւոր, Եւսիւ հայաստանեան պատուիրակութեան անդամ Տաթևիկ Հայրապետեանը Facebook-ի իր էջին վրայ նշած է, որ Եւսիւ ամառնային նստաշրջանը, բացի լրատվամար նիստերուն մէջ ընթացող բուն քննարկումներէն, պակաս վիճելի չէ նաեւ յարակից ձեռնարկներու (side-events) ծիրէն ներս:

«Այսպիսով, ատրպեյճանցիներու մասնակցութեամբ կամ նախաձեռնութեամբ Եւսիւ-ի մէջ կազմակերպուած էր երկու ձեռնարկ, որոնցմէ մէկը նուիրուած էր Ատրպեյճանի մէջ փախստականներու եւ «ներքին տեղահանուածներու» հարցերուն, եւս մէկ ձեռնարկ՝ Արցախի մէջ դատապարտուած երկու ատրպեյճանցի յարձակողներուն: Երկու պարագային ալ ատրպեյճանական լրատվամիջոցները կ'իրականացնէին լուսաբանում: Ձեռնարկներուն ներկայ եղած եմ նաեւ ես եւ հակադարձած ատրպեյճանական պնդումներուն», - նշած է Տաթևիկ Հայրապետեան:

Անոր տեղեկութիւններով՝ կազմակերպուած ձեռնարկին հիմնական նպատակն էր խօսիլ, թէ

Ատրպեյճանը ինչ քաղաքականութիւն կը վարէ փախստականներու հարցով: Բանախօսներուն մէջ էր Ատրպեյճանի մէջ փախստականներու եւ «ներքին տեղահանուածներու» հարցերով պետական կոմիտէի փոխնախագահ Ֆուատ Հուսէյնովը: Տաթևիկ Հայրապետեանի խօսքով՝ հիմնական շեշտադրումները ուղղուած էին ոչ թէ փախստականներու հանդէպ տարուող քաղաքականութիւնը ներկայացնելուն, այլ՝ Հայաստանի դէմ հերթական քարոզչական արշաւը իրականացնելուն:

«Ի պատասխան՝ ես եւ Նայիրա Չոհրաբեկեանը, մերժելով Ֆուատ Հուսէյնովի ելույթին բովանդակութիւնը իր ամբողջութեան մէջ՝ իբրեւ կեղծ եւ հակամարտութեան բնոյթը խեղաթիւրող, շեշտեցինք, որ անթոյլատրելի է նման ձեռնարկներու կազմակերպումը, ուր կը ներկայացուի միայն ատրպեյճանական կողմը, մինչդեռ հակամարտութեան միւս կողմերը՝ Արցախը եւ Հայաստանը իրենց համապատասխան պաշտօնեաներով ներկայացուած չեն», - նշած է Տաթևիկ Հայրապետեան:

Երկու ատրպեյճանցի յարձակողներու հետ կապուած ձեռնարկը կազմակերպած էր Եւսիւ-ի մէջ ատրպեյճանական պատուիրակութիւնը: Ներկայ էր նաեւ յարձակողներէն մէկուն որդին: Հայաստանի հասցէին հնչեցուցին մեղադրանքներ, ներկայացուցին ստալոյ տեղեկութիւններ, ցուցադրեցին նաեւ տեսանիւթ:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Ընդունած է Կլեմտէյլի Քաղաքապետ Արա Նաճարեանը



Վարչապետ Նիկոլ Փաշինեանը ընդունած է Կլեմտէյլի քաղաքապետ Արա Նաճարեանը: Վարչապետը ողջունած է Արա Նաճարեանի այցը Հայաստան եւ նշած, որ մեր երկրին մէջ եղած քաղաքական փոփոխութիւններուն արդիւնքով սփիւռքի հետ յարաբերութիւններու հաստատման առընթեր ստեղծուած են նոր հնարաւորութիւններ: Նիկոլ Փաշինեանի խօսքով՝ Հայաստանը պէտք է աւելի ամրապնդէ սփիւռքի հետ կապերը եւ Կլեմտէյլը այդ գործին մէջ կարեւոր դերակատարում ունեցող կեդրոններէն մէկն է:

Իր հերթին, Արա Նաճարեանը նշած է, որ սփիւռքը ոգեշնչուած է նոր Հայաստանով: Կլեմտէյլի քաղաքապետը տեղեկացուցած է, որ տեղի ունեցող փոփոխութիւններու

արդիւնքով բազմաթիւ սփիւռքահայերու համար հայրենիքի մէջ ստեղծուած են ապրելու եւ գործարարութեամբ զբաղուելու անհրաժեշտ պայմաններ: Ըստ պարոն Նաճարեանի՝ այժմ սփիւռքահայերու մօտ մեծ վստահութիւն կայ Հայաստանի կառավարութեան նկատմամբ եւ սփիւռքի մէջ ուրախ են, որ Հայաստանը կը գտնուի յուսալի ձեռքերու մէջ: Ան յատուկ ողջունած է Զարեհ Սինանեանի Սփիւռքի հարցերով Գլխաւոր յանձնակատարի պաշտօնին նշանակումը:

Հանդիպման ընթացքին Նիկոլ Փաշինեանը եւ Արա Նաճարեանը քննարկած են Հայաստանի ապագային, կառավարութեան նպատակներուն եւ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու ամրապնդման վերաբերող հարցեր:

Սահմանադրական Դատարանի Ծգնաժամ

Շարունակուած էր 1-էն

նադրական Դատարանի շուրջ ստեղծուած որեւէ ճգնաժամ չկայ: Արդարադատութեան նախկին նախարար, Հայաստանի Հանրապետական կուսակցութեան խորհուրդի անդամ Դաւիթ Յարութիւնեան Վահէ Գրիգորեանի նամակի բովանդակութիւնը կը նկատէ իրաւաբանութեան հետ աղերս չունեցող շարադրանք:

«Այս տեքստում տրամաբանութիւնն է իսպառ բացակայում, ես չեմ ասում այս տեքստը մինչեւ վերջ ընթացքը համար պետք է ունենալ շատ մեծ համբերութիւն, անհեթեթ մտքեր կարողաւ նկատմամբ», - ըսաւ Դաւիթ Յարութիւնեան:

Փաստաբան Կարապետ Բաղաբեան չկիսեր ընդդիմախօսներու արտայայտած տեսակէտներն ու զանոնք կը նկատէ հիմնագուրկ:

«Այս նամակը ոչ միայն այդ փաստերի մանրամասն շարադրանքն է, այլեւ դրա հիմքում ընկած իրաւունքի նորմերի շարադրանքն է, դրանց տրամաբանութեան եւ մեկ-

նաբանութեան կանոններին համապատասխան օրէնքի մեկնաբանութիւնն է», - յայտնեց Բաղաբեան:

«Ինչո՞ւ Սահմանադրական դատարանի անդամները դադարել են իրենց փաստաթղթերը ստորագրել եւ ներկայանալ որպէս անդամներ, այլ ներկայանում են որպէս դատաւորներ, եթէ դա նոյնն է, եթէ իրաւաբանական տարբերութիւն չկայ, ինչո՞ւ են որոշումները մէջ գրում դատաւոր Գիւլումեան, դատաւոր Սաչատրեան, դատաւոր Թոփեան ինչի՞: Եթէ նոյնն է, եկէք ազնիւ եղէք՝ գրէք: Ի՞նչ է ամաչում էք, որ Սահմանադրական Դատարանի անդամ էք», - ըսաւ փաստաբանը:

Մինչդեռ արդարադատութեան նախկին նախարար Դաւիթ Յարութիւնեանի մեկնաբանմամբ՝ ՄԴ դատաւոր եւ անդամ տեղմինները նույնանման են:

Միւս կողմէ, Սահմանադրական Դատարանի անդամները հրապարակեցին յայտարարութիւն մը՝ Դատարանի վերաբերեալ արտայայտուած կարծիքների որակելով որպէս քաղաքական եւ արժանի չեն որեւէ արձագանքի:

Հայաստանի Եւ Արցախի

Շարունակուած էր 1-էն

միութեան անունով՝ իրաւաբան Կարո Ղազարեան:

Հայաստանի եւ Արցախի Մարդու իրաւունքներու պաշտպաններ՝ Արման Թաթոյեան եւ Արտակ Բեգլարեան իրենց շնորհակալական խօսքերուն մէջ անդրադարձան իրենց առաքելութեան ու նպատակներուն, որոնց գծով կը տանին մեծ աշխատանք, որպէսզի Հայաստանի եւ

Արցախի ժողովուրդներու մարդկային իրաւունքները ըլլան պաշտպանուած: Երկու պաշտպաններն ալ յայտնեցին թէ, իրենք պետութենէն անկախ էն ու կը գործեն ապակուսակցական մօտեցումով:

Անոնք յայտնեցին թէ, այս ուղղութեամբ կը համագործակցին նաեւ Լոս Անճելըսի Հայ Իրաւաբաններու Միութեան եւ միջազգային այլ կազմակերպութիւններու հետ:

Պոլսոյ Հայաստանցիները Դարձեալ Վտանգի Առջե՞ւ



Վերջին մէկ ամսուան ընթացքին Պոլսոյ զանազան շրջաններուն մէջ հակահայ արարքներ գրանցուեցան, որոնց ամէնէն ուշագրաւը Սամաթիոյ մէջ ապրող Արփինէ անունով հայուհիի մը դէմ եղած յարձակումն էր: Արփինէն, որ Հայաստանի քաղաքացի է, կ'որոշէր վերջնականօրէն հեռանալ Պոլսէն ու ետ դառնալ հայրենիք: Դէպքը բաւական մեծ յուզում կ'առաջացնէր Պոլսոյ հայ համայնքի շրջանակներուն մօտ ու անգամ մը եւս վեր կը հանէր թուրքիա ապրող հայաստանցիներու անվտանգութեան խնդիրը:

Պէտք է նշել, որ հայաստանցիներու եւ առհասարակ հայերու դէմ գործուած յարձակումներու երեւոյթը նորութիւն չէ ու զարմանալիօրէն այդ դէպքերը յաճախ կը համընկնին թուրքիոյ մէջ տեղի ունեցող ընտրութիւններու ժամանակամիջոցին:

Այս, անշուշտ, կրնայ պատահականութեան արդիւնք ըլլալ, սակայն երբ խօսքը թուրքիոյ մասին է, ապա պատահականութեան հարցը մէկդի դնելով, պէտք է միշտ հաշուի առնել, որ այդ երկրի ամէնէն թոյլ օղակ համարուող հայերը յաճախ կրնան թիրախ դառնալ նման դատապարտելի արարքներու, այլ խօսք որ թուրքիան յաճախ կը շահարկէ երկրին մէջ ապրող փոքրամասնութիւնները:

րու պարագան, յոխորտալով անգամ, որ իրենք շատ բան կ'ընեն հայերու, յոյներու եւ ասորիներու համար:

Ամէն պարագայի, ստորեւ «Արարատ»ի ընթերցողներուն ներկայացուած եւ լրագրող Այշէ Կիւնայտոյի ստորագրութիւնը կրող եւ «Հաշտութեան Յոյսեր եւ Կեսարացի Մարիճա Քիւլչիւքը» խորագրեալ յօդուածը կարեւոր փակագծեր կը բանայ Պոլսոյ մէջ ապրող եւ կեանքի պայքար մղող մեր հայրենակիցներուն մասին:

Ի դէպ, Կիւնայտու այս յօդուածը գրած է 2013 թուականի այն օրերուն, երբ դարձեալ Պոլսոյ Սամաթիա հայկական թաղամասին մէջ անծանօթ ոճրագործներ յարձակած էին Մարիճա Քիւլչիւք անունով հայուհիի մը վրայ ու անոր մարմնին դանակով խաչեր քաշելէ ետք դաժանօրէն սպաննած: Պարտիմ յիշեցնել, որ սպանութեան գործը տարուած էր դատարան եւ ի գարմանա շատ-շատերու պարգունած էր, որ Քիւլչիւքը սպաննուած է հայաստանցիի մը ձեռամբ: Աւելի ուշ այդ ոճրագործը կը բանտարկուէր եւ, սակայն, անոր հետ եղող միւս չորս ոճրագործները խոյս կուտային արդարութենէն, երկրի մը մէջ, ուր արդարութիւն կոչուածն այլ հեռու եւ անհասանելի իտէյալ կը թուի ըլլալ:

Ս. Ա.

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՅՈՅՍԵՐ ԵՒ ԿԵՍԱՐԱՑԻ ՍԱՐԻՉԱ ՔԻՉԻԻՔԸ

Դարձեալ հաշտութեան յոյս մը գովացուց սիրտերը: Բայց նոյն պահուն լսեցինք, որ երկրին արեւմտեան նահանգներուն մէջ

յարձակումներ կը գործուին քիւրտերու վրայ, որոնք քաղաքական որեւէ գործունէութեան մէջ չեն: Այս բոլորէն վերջ, նոյն օրերուն

սրտակեղեք լուր մը եկաւ Սամաթիայէն: Դեռ մէկ ամիս առաջ ուրիշ տարեց հայ կին մըն ալ Սամաթիոյ մէջ յարձակումի ենթարկուած, մէկ աչքը կորսնցուցած էր: Այս անգամ ալ Սամաթիոյ մէջ դաշունահարուելով սպաննուած էր 84 տարեկան կեսարացի Մարիճա Քիւլչիւքը: Թէեւ օղերն ու ապարանջանները առնուած էին, բայց նախադրածակները բնաւ չէին խուզարկած տունը, սեղանին վրայ դրուած դրամին իսկ ձեռք չէին դպցուցած: Այսինքն՝ բուն նպատակը գողութիւն չէր:

Հրատարակուած առաջին լուրերուն մէջ ըսուած էր, որ կնոջ կուրծքին վրայ դանակով խաչի նշան գծուած էր: Վերջը կնոջ որդին ըսաւ, որ թերեւս սխալ տեսած էր: Առաջին անգամ կնոջ ընտանիքի անդամներն էին, որ տեսած էին անոր մերկ մարմինը: Բայց, ինչպէս արդէն իմացած էինք, ապահովութեան տնօրէնութիւնը ընտանիքին յանձնարարած էր, որ «դուրսը» շատ չխօսին:



Յուղարկաւորութենէն երկու օր առաջ իր քրոջը տանը մէջ էինք: Տարիքոտ կինը, մեզի հետ ողջագուրուելով, շնորհակալութիւն կը յայտնէր շարունակ: Ուրիշներ ալ կային տան մէջ՝ մեծամասնութեամբ կիներ: Բոլորն ալ բարի գալուստ մաղթելէ, ցաւակցութիւն յայտնելէ ուրիշ բան չէին խօսէր՝ բացի քանի մը ձեւակերպական նախադասութիւններէ, ինչպէս՝ «դեռ բան մը չենք գիտեր, տեսնենք՝ ինչդիրը մէջտեղ ելլէ, անկէ վերջ կը խօսինք» եւ այսպիսի նախադասութիւններ: Յայտնի է, որ ընտանիքի անդամները կը լռէին որոշ կէտերու վրայ: Իմացանք նաեւ, որ ընտանիքի անդամներուն ցոյց չեն տրուած տեղույն վրայ կատարուած արձանագրութիւններն ու առնուած լուսանկարները: Մեր փաստաբան ընկերները կ'ըսէին,

որ ընտանիքին իրաւունքն է տեսնել այդ պատկերները, բայց երբ փաստաբանները կը յիշեցնէին իրաւական դիմումներու կարելիութիւնը, միշտ նոյն լուրերը կը տիրէր անոնց մօտ:

Ես կարծես թէ բաներ մը կը կարգայի ընտանիքին կիներուն՝ ինծի ուղղուած նայուածքներուն մէջ: «Շնորհակալ ենք, յայտնի է, որ մեզի համար բաներ մը ընել կ'ուզէք, այս կերպով դուք ձեր պարտականութիւնը կատարած պիտի ըլլաք եւ դուք ձեզ հանգիստ պիտի գգաք: Բայց դարձեալ մեզ մօտ պիտի ըլլա՞ք վաղը, երբ մեր գաւակները դպրոց պիտի դրկենք, երբ ամէն գիշեր մեր դռները պիտի կղպենք, երբ առաւօտուն մեր վարագոյրները պիտի բանանք»: Այո՛, կարծես թէ այսպէս կ'ըսէին անոնք մեզի: Հիմա, որքան ալ տաքուկ ողջագուրումներ ունենայինք անոնց հետ, յայտնի էր, որ անոնց եւ մեր միջեւ կար հեռաւորութիւն մը, գոր կարելի չէր գոցել: Որովհետեւ ժխտումի տարիներէ վերջ հա-

րուստ քաղաքակրթութենէ մը մնացած ափ մը հայուն զգացումները զգալ, ինքզինք անոնց տեղ դնել կարելի չէր:

Երկու օր վերջ յուղարկաւորութիւնը կը կատարուէր: Սամաթիոյ եկեղեցիին մէջ, եկեղեցին գունդ առ գունդ եկած մարդոցով լեցուած էր: Ներսը արարողութիւնը սկսաւ, ժողովուրդն ալ մասնակցեցաւ երգեցողութիւններուն:

Պարբերաբար կը լսուէին հեծկլտուքներ: Երբ դազաղը ուսամբարձ դուրս կը հանուէր, Մարիճային աղջիկը, երկու հոգիի թեւը մտած, հագիւ թէ կը յաջողէր քալել: Դուրսը սկսաւ աղաղակ ներարձակել: Սրտակեղեք եղերեք մը արձակուած էր:

Բայց ականջիս մէջ ուրիշ

Շար.Պ էջ 18



MARONIAN
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served your health and life insurance needs.

We will continue to stand by your side and secure your **family** and **business** with our full range of insurance policies.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE

(818) 500 9585

805 E. Broadway, Glendale, CA 91205
sbmaronian@gmail.com
CA INSURANCE LICENSE # 0C99815

MaronianInsurance.com



HEALTH



LIFE



COMMERCIAL

Հայ Մշակույթին Նուիրուած Դասընթացքներ «Լարք» Հաստատութեան մէջ

«Լարք» Երաժշտական Հաստատութեան Տնօրէնութիւնը կը տեղեկացնէ թէ Երաժշտական Գիտութիւններու կողքին, 2019-2020 տարեշրջանի Հայագիտական Դասաւանդութիւնները պիտի շարունակուին դասաւանդուիլ Սեպտեմբեր 7, 2019էն սկսեալ, ամէն Շաբաթ օր, առաւօտեան ժամը 8-11, երեք շաբաթական դասաժամերով:



րուն մէջ շեշտը կը դրուի Ինքնաճանաչումի եւ Ինքնագիտակցութեան զարգացմանը, ինքնագիտակցութեան եւ Հայութեան Հոգեւոր, Իմացական եւ Մշակութային դարաւոր ժառանգութեան վրայ:

Նոր ժամանակներու մէջ՝ Հայութեան գոյատեւումի ապահովութեան նախապայմանը «Ինքնաճանաչում»ի խնդիրն է՝ սեփական պատմութեան, լեզուի, մշակույթի եւ Ինքնութեան հոգեւոր եւ մտաւոր բաղադրիչներու ծանօթութեամբ: Կասկած չկայ թէ Ինքնաճանաչումը կը ձեւաւորէ մեր ամբողջական աշխարհայեացքը Հայ Ազգային քաղաքակրթական արժէքներուն եւ կը նպաստէ անոնց պահպանումին եւ հարստացումին:

Դասաւանդութիւնները կը կատարուին Հայերէն Լեզուով՝ Տաճատ Ծայր. Վրդ. Եարտըմեանի կողմէ:

Մասնակցութեան գինն է 300 տոլար (երեկոյն տոլար՝ մէկ կիսամեայի համար): Ամէն կիսամեայ կը տեւէ 5 (հինգ) ամիս:

Հետաքրքրուողները կրնան դիմել «Լարք»ի Քարտուղարութեան. Հեռ. (818) 500-9997 կամ e-mail info@larkmusicalsociety.com:

«Լարք»էն ներս, Հայ Մշակույթին եւ Հայ Ժողովուրդի Ինքնութեան վերաբերող դասաւանդութիւնները սկսած էին 2014 թուականին եւ կը շարունակուին այսօր ալ: Մասնակցողներուն հետաքրքրութիւնը եւ խանդավառութիւնը առաջին իսկ օրէն մնացած է աննախադէպ:

2019-2020 տարեշրջանին (Սեպտեմբերէն սկսեալ) պիտի դասաւանդուին հետեւեալ նիւթերը. -

- 1) Դասական Հայերէն կամ Գրաբար,
- 2) Միջնադարեան Հայաստանի Ուսումնակրթական Կերտները եւ Հայ Ինքնութեան Պահպանումը (Ե-ժԼ դարեր) եւ
- 3) Կինը Հայ Քրիստոնէական Մշակույթի Արմատներուն մէջ (Դ-ժԼ դարեր):

2018-2019 շրջանին դասաւանդուեցաւ նաեւ Հայ Պատմագրութիւնը եւ Հայ Ինքնութեան Գիտակցութիւնը (Ե-ժԼ դարեր):

Դասընթացքի հիմնական նպատակն է օգտուել Գրաբար Լեզուի հարուստ ժառանգութեան եւ մատչելի դարձնել: Իսկ Հայ Իմացական Մշակույթին վերաբերող նիւթերը կը ծառայեն թէ՛ ճանչնալու մեր դարաւոր մշակույթը եւ թէ՛ խորացնելու եւ զօրացնելու մեր ազգային Ինքնութեան գիտակցութիւնը: Դասաւանդուած նիւթե-

Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան Ռոթըրի «Միջին Արեւելքի Նախաձեռնութիւն» Խորհուրդի Նախագահ Կ'ընտրուի



Վերջերս Ռոթըրի Միջազգային կազմակերպութեան համաշխարհային խաղաղութեան սատարող վարչութիւնը միաձայնութեամբ ընտրեց Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանը ստանձնելու «Միջին Արեւելքի նախաձեռնութիւն» նորաստեղծ խորհուրդի նախագահութիւնը:

Խորհուրդի մաս պիտի կազմեն խաղաղութեան գործիչներ, նախկին ղեսպաններ, տարբեր համալսարաններու դասախօսներ եւ Միջին Արեւելքի մասնագէտներ:

Խորհուրդի նպատակն է հանդիպումներ ունենալ հրեայ եւ պա-

ղեստինցի ղեկավարներու հետ ներկայացնելով խաղաղութեան նպատարող նոր ու հետաքրքրական առաջարկներ, կազմակերպել խաղաղութեան նուիրուած համագումարներ եւ աշխատանիստեր, հրատարակել մասնագիտական յօդուածներ առնչուած Միջին Արեւելքի մարտահրաւէրներուն եւ ներառել երիտասարդ ուժեր շրջանէն, պատրաստելով գիրքեր դառնալու խաղաղութեան նպատարող գործիչներ:

Այդ առիթով Դոկտ. Տէր Եղիայեան իր շնորհակալութիւնները յայտնեց իրեն վստահուած այս նոր

Հրաշալի Բեմադրութիւն՝ Փոքր Սրահում



ՎԱՉԻԿ ՎԱՐՂԱՆԵԱՆ

Վերջերս ականատես եղանք մի հրաշալի բեմադրութեան: «Հայ թատրոնի ընկերութիւն»-ը ներկայացնում էր մեծ թատերագիր երջանկալիշատակ Արամաշոտ Պապայեանի լաւագոյն ստեղծագործութիւններից մէկը՝ «Գնայ մեռի արի սիրեմ»:

Գործին լաւատեղեակ էի: Մենք իրանում ներկայացրել էինք վերոյիշեալ հեղինակի գրչին պատկանող լաւագոյն ստեղծագործութիւնները: Երբ տեղեկացայ բեմադրութեան մասին նախ զարմացայ մասնաւոր այն պատճառով, որ որոշուած էր այն ներկայացնել մի փոքր սրահում, որի բեմը նոյնպէս փոքր է: Ես գիտէի, որ գործը շատ ծանր է: Ծանօթ լինելով Արամաշոտ Ստեփանեանի բարձր կարողութեանը հաւատում էի, որ ներկայացումը կը ստացուի: Սակայն ստացուեց իմ պատկերացումից վեր: Գործող դերասանների մէջ հանդիպում էիր տաղանդաւոր կատարողների: Ես ծանօթ էի Արիս Բաղումեանի, Ժանէթ Ոսկանեանի եւ Արիս Սիմոնեանի բարձր վարպետութեանը: Սակայն ինձ համար յայտնություն էր Անժելա Յովսէփեանը:

Ներկայացման մէջ Տարօնի առանցքային դերը վստահուել էր փորձառու եւ տաղանդավոր Արիս Բաղումեանին, ով իր դերը կատարեց հրաշալի: Սոփիկի կերպարը մարմնաւորում էր փորձառու ժանէթ Ոսկանեանը, ով յենուելով իր

երկարատեւ փորձառութեանը ինչն էլ նախեւառաջ վստահութիւն է ներնչում, հմուտօրէն ներկայացրեց Սոփիկի դերը: Տարօնի մեծ հարսի դերը վստահուել էր Արիս Սիմոնեանին: Ինչպէս սպասուած էի Արիսան լաւագոյնս ըմբռնելով Լիլի կերպարը հրաշալի կատարեց իր դերը: Եւ ինչպէս սկզբում ականարկեցի ինձ հիացրեց յատկապէս Անժելա Յովսէփեանը: Նա բեմի վրայ այնքան վստահ էր ներկայացնում իր բոլոր շարժումները, որ հանդիսատեսին համոզում էր, որ ոչ թէ խաղում է այլ՝ ապրում: Անարդար կը լինի, եթէ չնշէի Արիս Քէշիշեանի, Կարէն Պետրոսեանի, Զարեհ Յովսէփեանի, Նորայր Այվազեանի եւ Նորվարդ Աւանեսեանի անունները, ովքեր ջանք չէին խնայել իրենց յանձնարարութիւնները լաւագոյնս կատարելու համար:

Անշուշտ այս բոլորի մէջ ցայտուն եջեւում էր Արամաշոտ Ստեփանեանի ձեռագիրը: Արամաշոտը նաեւ աչքի է ընկնում իր համեստութեամբ: Երբ մարդիկ նրա ձեռքը սեղմում եւ շնորհավորում են, նա համեստօրէն յայտնում է, որ ինքն առանձին դեր չի ունեցել եւ գործի յաջողութիւնը համարում է գործող անձանց լաւ աշխատանքների արդիւնք:

Վերջում կը ցանկանայ մեր արուեստասէր համայնքն աւելի մեծ ուշադրութիւն դարձնել հայապահպանմանը նուիրուած նմանատիպ աշատանքներին:

Հայ Քոյրերու Վարժարանը Նշանակած է Նոր Տնօրէն

Հայ Քոյրերու Վարժարանի Ընտանիքը ուրախութեամբ կը յայտարարէ թէ Յունիս 2019ին Հայ Քոյրերու վարժարանը նշանակած է նոր տնօրէն մը յանձինս՝ Դոքտ. Յուլիոյ Թէյէզի, իր կողքին ունենալով Քոյր Լուսիան, որպէս վարժարանի ընդհանուր պատասխանատու:

Դոքտ. Թէյէզ ունի կրթական հարուստ փորձառութիւն ուսուցչութեան եւ տնօրէնութեան ոլորտներէ ներս:

Դոքտ. Թէյէզ արժանացած է հեւեւեալ վկայականներու եւ մակրդիրներու՝

Doctorate in Education from Loyola Marymount University and a Master of Arts in Education as well as a second Masters Degree in Elementary School Administration from Notre Dame University. Նաեւ an undergraduate degree from California State University Channel Islands.

Բարի գալուստ կը մաղթենք եւ կը շնորհակարանք Դոքտ. Յուլի-



իոյ Թէյէզը իր նոր պաշտօնին համար, կը մաղթենք յարատեւ յաջողութիւն յառաջիկայ ուսումնական տարիներուն, հաւատարմով որ իր կարողութեամբ, փորձառութեամբ եւ նուիրումով օժտուած անձ մը Հայ Քոյրերու Վարժարանը պիտի առաջնորդէ դէպի փայլուն եւ նոր բարձունքներ:

առաքելութեան համար, խոստանալով գործադրութեան դնել նոր ծրագիրներ, որոնք պիտի յաւելան

թափ տան Միջին Արեւելքի խաղաղութեան իրականալիք հեռանկարներուն:

Արա Կիւլէրի Լուսանկարչական Ցուցահանդէսը Գաւրոնի Մէջ



Անցեալ շաբաթ, ձաբոնի Քեթթօ քաղաքին մէջ, տեղի ունեցած G-20 միջազգային գագաթաժողովի ծիրէն ներս, բացումը կատարուեցաւ պոլսահայ ականաւոր լուսանկարիչ Արա Կիւլէրի ցուցահանդէսին:

Թուրքիոյ նախագահ էրտողանի ներկայութեամբ ու խորհրդանշական ժապաւէնի կտրուումով, Թուրքիոյ եւ Միջազգային լրատու գործակալութիւնները արձագանգ հանդիսացան այս լուրին: Նշենք նաեւ որ բացման արարողութեան ներկայ էին նաեւ էրտողանի կինն ու ձաբոնի արքայադուստր Աքիբօն:

Այս առթիւ նախագահ էրտողան շնորհակալութիւն յայտնեց

ցուցահանդէսի կազմակերպիչներուն եւ լիչեցուց որ այս ցուցահանդէսը նախապէս բացուած էր նաեւ Լոնտոնի եւ Փարիզի մէջ ու մեծ ընդունելութիւն գտած էր մշակութասէրներու կողմէ: Էրտողանի դիտել տուաւ որ Արա Կիւլէրի մահացած էր քանի մը ամիս առաջ 17 Հոկտեմբեր 2018ին: Աշխարհի լաւագոյն եօթը լուսանկարիչներէն մէկն էր եւ Թուրքիոյ հպարտութիւնը ու յարեց. «Ինծի համար մեծ պատիւ է բացումը կատարել այս ցուցահանդէսին»:

Դաշտօնական հիւրերն ու հրաւիրելները դիտեցին Արա Կիւլէրի 60 լուսանկարները, որոնց մեծամասնութիւնը իսթանպուլէն եգալի տեսարաններ էին:

Դոկտ.Ջրայր Գեպէճեանի Նոր Հատորը Ստացաւ Յատուկ Մրցանակ



Արաբական Մոցի Աստուածաշունչի Ընկերութիւնը ուրախութեամբ կը յայտարարէ թէ իր Ընդհանուր Քարտուղար Դոկտ.Ջրայր Գեպէճեանի վերջերս լոյս տեսած Անգլերէն նոր հատորը՝ «Աստուածաշունչի Յանձնարութիւնը՝ Վերագտնել Հաւատք, Յոյս եւ Անձը» ստացած է յատուկ մրցանակ՝ որպէս լաւագոյն «Ծրագիր-Յայտագիր» ի հրատարակութիւն:

Միացեալ Աստուածաշունչի Ընկերակցութիւնները՝ իրենց միջազգային համագումարին՝ որ տեղի ունեցաւ Աթէնք, Յունաստանի մէջ՝ Յունիս 17-26, 2019 ին՝ եւ որուն կը մասնակցէին աւելի քան երկու հարիւր ներկայացուցիչներ եւ որոնք կու գային հարիւր տարբեր երկիրներէ՝ Դոկտ.Գեպէճեանի հատորը ներկայացաւ եւ ստացաւ որպէս լաւագոյն մրցանակի դափնեկիր՝ եւ մեկնելով նոյն ընկերակցութեան աշխատանքային ծրագիրներու համար հաստատուած նպատակակէտերէ:

Միացեալ Աստուածաշունչի Ընկերակցութիւնները՝ իրենց համաշխարհային համաժողովին ըն-

թացքին՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Ֆիլադելֆիա քաղաքին մէջ՝ 2016 թուականին՝ հաստատեց ութը կէտերէ բաղկացած աշխատանքային ծրագրային սկզբունքներ՝ որոնք հիմքը պիտի դառնային իւրաքանչիւր երկրի գրասենեակի աշխատանքներուն համար եւ յաջորդող տարիներուն ընթացքին: Եւ այս իմաստով՝ Դոկտ.Գեպէճեանի հատորը ստացաւ այդ ծրագիրներէն առաջինի՝ «Կեդրոնանալ Յատուկ Հաւաքականութիւններու վրայ եւ Անոնց Կարգավիճակներուն մէջ»՝ եւ որ կ'ընդգրկէ Աստուածաշունչի եւ անոր պատգամին ընկալումը ինչպէս գաղթականներու, տեղահանուածներու, անգրագէտներու, ֆիզիքական անկարողութիւններ ունեցող մարդոց, այլ հաւատքի պատկանողներու, օտարերկրէս բանուորներու եւ սփիւռքեան գաղութներու մէջ ապրողներու ու տակաւին: Այս իմաստով՝ Դոկտ. Գեպէճեանի հատորը նկատուեցաւ որպէս լաւագոյն ծրագիր՝ որ կ'ամբողջացնէր այս միջոցառումը եւ որուն հիման վրայ արժանացաւ առաջին մրցանակին:

Պատրիարքական Տեղապահի Ընտրութեան Միջամտելու Հարցով Փայլան Պարզաբանում Պահանջած է Թուրքիոյ Ներքին գործոց նախարարէն



ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԻՆՉՈՒՒ ԿԸ ՄԻՋԱՍՏԷ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆԴՈՒԹԵԱՆ:

Թուրքիոյ հայոց երջանկայիշատակ Մետրոպօլիտան պատրիարքի վախճանումով սկսած պատրիարքական ընտրութեան գործընթացը պիտի վարէ պատրիարքական տեղապահը, որոնք ընտրութիւնը նախատեսուած էր յունիսի 27-ին: Մակայն ներքին գործոց նախարարութիւնը, Պոլսոյ կուսակալութեան միջոցով, 26 յունիս 2019-ին Թուրքիոյ հայոց պատրիարքութիւն յղած գրութեամբ, առանց որեւէ պատճառաբանութիւն նշելու, յայտնած է, թէ տեղապահի ընտրութիւնը պետք է յետաձգուի 4 յուլիս 2019 թուականին:

Այս նիւթին շուրջ գրաւոր հարցում մը ուղղեցինք ներքին գործոց նախարար Միւլլեման Սոյլուի:

- Ի՞նչ է ձեր միջամտութեան պատճառաբանութիւնը՝ Թուրքիոյ հայոց պատրիարքութեան կողմէ ճշդուած պատրիարքական տեղապահի ընտրութեան թուականին:
- Ինչպէս պիտի յիշուի, 16 փետրուար 2017-ին կայացած էր պատրիարքական տեղապահի ընտրութիւն մը, գոր Պոլսոյ կուսակալութիւնը իր յղած գրութեամբ ջնջած էր, երբ դեռ ժողովականները չէին արձակուած: Նախարարութիւնը ինչո՞ւ եւ ի՞նչ իրաւական հիմունքով կը միջամտէ հոգեւոր հաստատութիւն:

Թուրքիոյ Ժողովուրդներու դեմոկրատական կուսակցութեան հայազգի պատգամաւոր Կարօ Փայլանը ներքին գործոց նախարար Սուլէյման Սոյլուին հարցադիմում ուղղած է՝ պահանջելով պարզաբանել, թէ ինչո՞ւ նախարարութիւնը կը միջամտէ պատրիարքական ընտրութեան գործընթացին:

Յունիս 27-ին նախատեսուած Պոլսոյ Հայոց պատրիարքի տեղապահի ընտրութիւնը յետաձգուած էր մինչեւ Յունիս 4-ը Պոլսոյ նահանգապետարանէն պատրիարքարան ուղարկուած պաշտօնական գրութեան համաձայն:

Փայլանը նախարար Սոյլուէն պատասխան կ'ակնկալէ, թէ ի՞նչ հիմնաւորմամբ պետութիւնը կը փոխէ տեղապահի ընտրութեան ամ-

սաթիւը: Յիշատակելով 2017 թուականին նահանգապետարանի կողմէ տեղապահական ընտրութիւնը չեղարկելու հանգամանքը՝ հայազգի պատգամաւորը պարզաբանում պահանջած է, թէ ինչո՞ւ եւ ի՞նչ իրաւունքով պետութիւնը կը միջամտէ հոգեւոր կառուց հանդիսացող Հայոց պատրիարքարանի ներքին գործերուն:

Ընդգծելով, որ Մայիս 23-ին Թուրքիոյ Սահմանադրական դատարանը երկար տարիներ պետութեան կողմէ պատրիարքական ընտրութեան խոչընդոտումը կրօնական ազատութեան ոտնահարում որակած էր՝ Փայլանը վրդովմունք յայտնած է, թէ արդեօք այս քայլերով չի շարունակուիր խախտուիլ հայ համայնքի

Հայ Մը Ուրբանիոյ Շրջանային Կուսակալ Նշանակուած

Ուրբանիոյ լրատուական աղբիւրներէն կ'իմանանք թէ 35-ամեայ հայ քաղաքական գործիչ մը, նշանակուած է մայրաքաղաք Քիեւի շրջանային կուսակալ: Կառավարութիւնը վաւերացուց երկրի եօթը շրջաններուն մէջ նոր կուսակալներ նշանակելու որոշում մը: Քիեւի շրջանի կուսակալի պաշտօնը յանձնեց Միխայիլ-Պիօ Հայրիեանին: Հայազգի գործիչը՝ ծնունդով պաքուէցի է: Ան իր համալսա-

րանական ուսումը Մոսկուայի մէջ ստանալէ ետք, շրջան մը աշխատած է Ուրբանիոյ Ռուսաստանի դեսպանատան մէջ: 2010-2013 թուականներուն ան եղած էր Ուրբանիոյ արտաքին գործոց նախարարութեան խորհրդական: Իսկ յաջորդող տարիներուն՝ երկրի ուժանիւթի նախարարութեան ռազմավարական ծրագիրներու եւ Եւրոպայի հետ համարկումի բաժնի պատասխանատուն էր:

իրաւունքները: «Պատրիարքարանի գործունէութիւնն ու պատրիարքական ընտրութիւնը կանոնակարգող 1863 թուականի Հայոց ազգային սահ-

մանադրութեան որ դրոյթներուն հիման վրայ նախարարութիւնը կը միջամտէ պատրիարքի ընտրութեան», - հարցումին մէջ նշած է Փայլանը:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈՒԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

Massis Weekly

Volume 39, No. 26

Saturday, July 6, 2019

PM Pashinyan “The Criminal Subculture Must Be Rooted out in Armenia”



YEREVAN (RFE/RL)--Prime Minister Nikol Pashinyan praised Armenia's state prosecutors on Monday, saying that they have done their job “effectively” since last year's leadership change in the country.

“In the past year I think that the Office of the Prosecutor-General has really become the New Armenia's Office of the Prosecutor-General and is prepared to accomplish the mission and the functions which are defined by the people of Armenia,” he said at an event that marked the 101st anniversary of the establishment of the law-enforcement agency.

In a speech, Pashinyan told the agency's employees at the same time that their work has not been “flawless.” He said that the prosecutors must do a better job of fighting against corruption. He also stressed the importance of ensuring everyone's equality before the law.

“Our upcoming tasks are very obvious in this regard: the criminals must receive an inevitable punishment,” he went on. “The criminal subculture must be rooted out in Armenia.”

Pashinyan did not cite specific criminal cases. He went on to award

medals to several prosecutors.

Some of their colleagues received different awards from other senior Armenian officials, including parliament speaker Ararat Mirzoyan. Among the officials awarded by Mirzoyan was Karen Bisharian, one of the prosecutors in the criminal case against former President Robert Kocharian and other former officials charged in connection with the 2008 post-election violence in Yerevan.

Bisharian urged reporters not to look for a connection between the award and his handling of the high-profile case. “I have tried to properly perform my duties in all cases assigned to me,” said the prosecutor.

Armenia's current prosecutor-general, Artur Davtian, was appointed to the post in 2016 by the former parliament controlled by then President Serzh Sarkisian's allies. Opposition members of that parliament, including Pashinian, voted against Davtian at the time.

Davtian, 40, faced calls for his resignation in the wake of last year's “Velvet Revolution” that brought down the Sarkisian administration. He refused to quit, saying that the prosecutors must not be affected by the regime change.

Aliyev: War with Armenia is Not Over

BAKU -- President of Azerbaijan Ilham Aliyev has declared that the war with Armenia is not over and this is the reason why Azerbaijan will continue increasing its military capacity, reports Interfax-Azerbaijan.

“We live in conditions of war. It is not finished yet and we should be ready every moment to liberate our native lands. I am sure that this day will come and Azerbaijan will restore its territorial integrity,” Aliyev said during a meeting with cadets and the teaching staff of Azeri military academy.

Aliyev stressed that the process of army building continues successfully and rapidly.

“Advanced work is underway, military equipment is being purchased, the level of combat effectiveness is increas-



ing. In short, today the Azerbaijani army is showing its strength. The strength of our army, combat capability, professionalism increases. Today our army is at a high level,” said Aliyev.

Number of US Citizens Seeking Armenian Passports Have Increased After 2018 Revolution

LOS ANGELES -- Number of US citizens of Armenian origins seeking to acquire Armenian citizenship has drastically increasing following the 2018 velvet revolution in Armenia, Voice of America reported.

Since Armenia's independence, the government's approaches to acquiring Armenian citizenship and dual citizenship have changed. Armenia has a law on dual citizenship adopted in 2007 and amended in 2017 according to which the Armenian citizens have a right to have more than one citizenship.

“We have a Diaspora, and many of our compatriots want to acquire Armenian citizenship. They are using this right in accordance with the law. After the revolution the aspirations, perceptions

among our compatriots have changed completely, they are looking at Armenia differently and have a great wish to communicate with the homeland. Acquiring citizenship or dual citizenship is one of these forms”, Armenia's Consul General in Los Angeles, Ambassador Armen Bayburdyan said.

The General Consulate in LA has calculated and revealed that over the past two years the number of people seeking Armenian citizenship has doubled.

Armenia has three diplomatic representations in the US. The process of acquiring Armenian citizenship lasts up to 6 months. According to the Armenian President's decree, the person, after being granted with an Armenian citizenship, should visit Armenia to receive the passport.

Armenian Deminers Clear 35,000 Square Meters of Land in Syria



YEREVAN -- Armenian servicemen have demined nearly 35,000 square meters of land in Syria since being deployed there in February, a senior official in Yerevan said on Monday.

Ruben Arakelian, director of the Armenian Defense Ministry's Center for Humanitarian Demining and Expertise (CHDE), said they have found 29 landmines and unexploded ordnance during an ongoing operation coordinated with the Russian and Syrian militaries.

Arakelian said the Armenian contingent aims to clear five potential minefields in and around the war-ravaged city of Aleppo with a combined area of 1.3 million square meters. “They have to be demined first so that we avoid casualties among civilians,” he told a news conference.

In a humanitarian mission, Armenia has sent 83 demining experts, army medics and military police officers tasked with protecting them to Syria on February 8. Russia welcomed and assisted in the deployment. But the United States, which is highly critical of the Russian military presence in Syria, criticized it.

The Armenian military rotated the contingent on June 16, sending a new team of sappers, doctors and other mili-

tary personnel to Syria for a four-month tour of duty.

Arakelian noted “logistical difficulties” of the operation. “Given that Syria is a country in a state of war, it's very difficult to handle logistical issues from Yerevan,” explained the official. “If it turns out that we did not send something there or need something new, we have trouble quickly shipping [those items.]”

Arakelian said that Armenian military personnel and equipment are transported to Syria only by Russian planes. “Besides, the Russian side ensures our contingent's safe movement to minefields and return to its base as well as its broader security in case of serious hostilities,” he added.

The Defense Ministry in Yerevan cited “the severe humanitarian situation” in Aleppo and “written requests from the Syrian side” when it first announced the deployment. It also pointed to the existence of an Armenian community in Syria.

The community, which used to have an estimated 80,000 members, is believed to have shrunk by more than half since the outbreak of the bloody conflict in Syria seven years ago. Thousands of Syrian Armenians have taken refuge in Armenia.

Armenian President Awarded with Prix De La Fondation 2019 of Crans Montana Forum



GENEVA -- The President of Armenia Armen Sarkissian, President of the Republic of Slovenia Borut Pahor and First Lady of Guinea Djene Kaba Condé were awarded with Prix De La Fondation 2019 during Crans Montana Forum which took place on June 28 in Geneva.

Prominent public and political figures, diplomats, businessman and representatives of the Armenian community of Switzerland attended the ceremony.

Handing the prize to President Sarkissian, Honorary Chairman and Founder of the Crans Montana Forum Jean-Paul Carteron said, "Mr. President, it's always a pleasure to listen to you. We appreciate your ideas not because they are ideas of a scientist, but because they are instructive and clear. Armenia is a small country, but is located in an important and complicated crossroad. Assum-

ing the President's Office, you brought hope and tranquility.

We still have much to do together and jointly we can bring them to life. I want to thank you for all you do".

Thanking for the award, President Sarkissian said that it is very important and valuable prize.

During the previous years former President of Poland Michel Bachelet, Former President of the European Commission Jose Manuel Barroso, last leader of the USSR Mikhail Gorbachev, former leader of Palestine Yasser Arafat, former Prime Minister of Pakistan Benazir Bhutto, former Polish President Lech Walesa, former Lebanese Prime Minister Rafik Hariri, President of the European Commission Jean-Claude Juncker, President of Georgia and others received the Prix De La Fondation 2019 of Crans Montana Forum.

Armenia, Azerbaijan Swap Prisoners



YEREVAN (Arka.am) -- The International Committee of the Red Cross (ICRC) facilitated today an exchange of prisoners between Armenia and Azerbaijan. Armenian citizen Zaven Karapetyan and Azerbaijani citizen Elvin Arif Oglu Hibragimov were repatriated to their respective countries, Anna Naghdalyan, a press officer for the Armenian Foreign Ministry, said in a Facebook post.

Zaven Karapetyan, a resident of the village of Berdavan, Tavush region of Armenia, strayed into the territory of Azerbaijan in July 2018 in still unknown circumstances, but in Azerbaijan he was portrayed as a saboteur and sentenced to 20 years in high-security prison. The Azerbaijani citizen Alvin Arif Oglu Hibragimov, born in 1986, crossed into Armenia on March 16.

"From the very beginning Armenian authorities said that Alvin Arif Oglu Hibragimov, who illegally crossed the state border of Armenia on March 16 of

this year, will be repatriated to Azerbaijan without preconditions because of humanitarian considerations. This process was carried out in close cooperation with the ICRC, in particular, with the mission of the organization in Armenia," Naghdalyan wrote.

Naghdalyan stressed that Hibragimov, a civilian, did not commit a serious crime; therefore such an attitude towards his case was acceptable.

"We also took note of the decision of Azerbaijan to release Zaven Karapetyan, a citizen of Armenia, who appeared on June 20, 2017 in the territory of Azerbaijan and organized his return to his homeland together with the ICRC," Naghdalyan said.

A representative of the Yerevan ICRC mission, Zara Amatuni, said that the procedure for returning the citizens of Armenia and Azerbaijan to their homelands took place on the Ijevan section of the Armenian-Azerbaijani border.

Armenian PM, Glendale Mayor Discuss Strengthening Armenia-Diaspora Relations



YEREVAN -- Prime Minister of Armenia Nikol Pashinyan met with Glendale Mayor Ara Najarian on July 1st in Yerevan. Welcoming the Mayor, the Premier said new opportunities are now available for establishing closer ties with the Diaspora amid the ongoing political changes in our country. According to Nikol Pashinyan, Armenia needs to further strengthen its relationships with the Diaspora, and Glendale should become a major center to promote that process.

In turn, Ara Najaryan noted that the Diaspora is enthusiastic about the idea of New Armenia. The Mayor of Glendale

stressed that the recent changes have resulted in better conditions for Diaspora-based Armenians to live and do business in the Homeland. In Mr. Najarian's words, the Diaspora trusts the Government of Armenia and is pleased to see Armenia in safe hands. In this context, he welcomed the appointment of Zareh Sinanyan as Chief Commissioner for Diaspora Affairs.

During the meeting Nikol Pashinyan and Ara Najarian discussed issues related to the future of Armenia, the goals of the Government and strengthening the relations between Armenia and the Diaspora.

Armenian Government Moves to Raise Minimum Wage



YEREVAN (RFE/RL) -- The Armenian government announced on Thursday plans to increase the minimum wage in the country by more than 23 percent.

A bill drafted by two members of Armenia's parliament and discussed by the government at a weekly meeting in Yerevan would raise it from 55,000 drams (\$115) to 63,000 drams per month.

Prime Minister Nikol Pashinyan's cabinet decided to go further and ask the National Assembly to set the minimum monthly wage at 68,000 drams (\$142).

The higher figure was proposed by the Ministry of Labor and Social Affairs. Deputy Labor Minister Gemafin Gasparian said it is based on recent research on the cost of living

in the country which was commissioned by the ministry.

Gasparian added that 35,000 people working in the public sector and 45,000 others employed by private firms are paid 55,000 drams per month at present. According to government data, the average monthly wage in Armenia stood at 179,000 drams as of April.

Deputy Prime Minister Mher Grigorian said in this regard that the government should make sure that private employers are unable to illegally underpay their workers through "hourly wage manipulations." "I think that we need to add to this bill regulations that would limit such room for maneuver by defining the length of a working day," he said.

Hypocritical Jewish Organizations and the Armenian Genocide

David Boyajian

“It’s all about the Benjamins [\$100 bills], baby,” Tweeted Congresswoman Ilhan Omar in February. She was accusing super-wealthy AIPAC (American Israel Public Affairs Committee) of bribing Congress into supporting Israel.

AIPAC, ADL (Anti-Defamation League), AJC (American Jewish Committee), B’nai B’rith, and Congress condemned Omar as anti-Jewish.

2,153 persons at JewsWithIlhan.org, though, defended her.

AIPAC can’t legally donate to politicians. Its Congressional Club members,

however, must do so. AIPAC members ‘bundle’ individual political contributions. Some AIPAC officials head political action committees (PACs) which back candidates. And an AIPAC affiliate flies Congresspersons to Israel.

After Israel, Jewish organizations’ imperative is the Holocaust.

They’ve steered Holocaust legislation — regarding commemorations, education, monuments, museums, reparations, and war crimes — through Congress, state and foreign legislatures, and the U.N.

America has special Holocaust and Anti-Semitism envoys.

Diminishing/denying the Holocaust is a crime in many European countries.

Yet leading Jewish organizations have long diminished/denied the 1915–23 genocide Turkey committed against 1.5 million Christian Armenians on their ancient homeland.


Also, AIPAC, ADL, AJC, B’nai B’rith, and JINSA (Jewish Institute for National Security of America) have colluded with Turkey to defeat Armenian Genocide resolutions in Congress. Demanding Holocaust legislation while thwarting recognition of another genocide is hypocrisy and moral bankruptcy.

“The Holocaust,” says Israeli journalist Yossi Melman, is often “an instrument of policy, not a moral compass.”

Turkish-Israeli-American Jewish collusion

Beginning in or before the 1980s, Turkey sought help against critics, including Armenian and Greek Americans, of its human rights abuses. Turkey’s then-ally Israel enlisted Jewish American organizations into defending Turkey. Jewish/Israeli/Turkish media have penned millions of words confirming this.

JINSA’s Yola Habif Johnston confessed in 2006 that AIPAC, AJC, B’nai B’rith, and her organization “have been working with the Turks” for



more than 15 years. “The Jewish lobby has quite actively supported Turkey to prevent the so-called Armenian genocide resolution from passing.” ADL was similarly guilty.

In 2007–8, Massachusetts’ Armenian Americans confronted the ADL. Hundreds of principled Jewish and non-Jewish activists, scholars, journalists, and organizations throughout America and internationally approved of the Armenian-led campaign.

Arlington, Bedford, Belmont, Lexington, Medford, Needham, Newburyport, Newton, Northampton, Peabody, Somerville, Watertown, Westwood, and the Mass. Municipal Assoc. expelled ADL’s phony No-Place-for-Hate program.

Numerous Jews and Israelis have sympathized with Armenians more than have many Christians. Though Israel won’t acknowledge the Armenian Genocide, the Knesset’s Education Committee wants it to.

Three years ago, ADL finally recognized the Armenian Genocide but merely on a “blog.” And its pledge to boost Armenian resolutions remains unfulfilled. Too little, too late anyway. The ADL is certainly no civil/human rights group.

For example, in 1993–2002 the ADL settled two lawsuits and paid compensation to San Francisco after — among innumerable illegalities — spying on thousands of civil rights, labor, progressive, Democratic, Black, Latino, Arab, Asian, Jewish, anti-Apartheid, and LGBT organizations and individuals.

More genocide hypocrisy

In Turkey’s propaganda film *Blonde Bride*, AJC Director Barry Jacobs illogically claimed the Armenian massacres couldn’t be genocide since the Holocaust was “unique.” Jewish jurist Raphael Lemkin, however, coined the word ‘genocide’ in 1944 and cited the Armenian massacres as a seminal genocide.

Jacobs once cruelly boasted that

AJC’s stance on the Armenian Genocide was “b****s****.” AJC, he vowed, “will be Turkey’s friends officially in Congress.”

“Official” AJC-Turkish collusion probably violates the Foreign Agents Registration Act.

AJC board member and Maryland State Senator Cheryl Kagan once maliciously compared an Armenian Genocide resolution to designating a state cat.

According to Israeli Pres. Shimon Peres, AJC Executive Director David Harris is Jews’ “foreign minister.” Harris and AJC are allies of Azerbaijan (Turkey’s corrupt, repressive ally) and its Armenian-Genocide-denying tyrant, Pres. Ilham Aliyev.

AJC’s “Democratic values for all” motto rings hollow, especially as Harris proudly accepted the tyrant’s coveted “Order of Friendship” award.

Azerbaijan’s “lobby in the U.S.,” declared Aliyev, “is the Jewish community.”

Indeed, Boston-based Rasky Partners officially represents Aliyev’s brutal regime. CEO Larry Rasky is an ADL board member/honoree and Joe Biden adviser/fundraiser. Interestingly, Rasky’s friend, workmate, and fellow ADL board member Peter Meade, a Catholic, loudly opposed Boston’s Armenian Heritage Park.

Shamefully, many Jewish writers worldwide have been gratuitously slandering Armenian Americans and Armenia, all because Israel buys oil from and sells billions in weapons to Azerbaijan, Armenia’s adversary.

Only in 2015 did AJC say it would support U.S. acknowledgment of the Genocide. AJC’s promise remains

unfulfilled. Too little, way too late.

AIPAC, revealed Turkish journalist Sedat Sertoğlu, once threatened House Speaker Dennis Hastert he’d lose “Jewish votes” if an Armenian Genocide resolution succeeded. Shimon Peres pushed President Clinton into stopping the resolution. Scholar Israel Charny blasted Peres: You’ve crossed “a moral boundary no Jew ... should trespass ... [your] denial of the Armenian Genocide [is] comparable to denials of the Holocaust.”

Investigations needed

Though Jewish groups aren’t solely at fault, their genocide hypocrisy and clout make them uniquely blameworthy.

Jewish organizations believe Holocaust diminishment/denial is anti-Semitism and, hence, “hate.” When those organizations diminish/deny the Armenian Genocide, are they not anti-Christian-Armenian “hate” groups?

Israeli-Turkish relations have soured. Jewish groups sold their souls for nothing.

Their opportunity to apologize, open their Turkish-related archives, and make reparations is gone.

Also gone is their credibility on civil/human rights and genocides.

Congress and state legislatures must now investigate and subpoena these two-faced organizations.

This article was originally published in such non-Armenian media as *ForeignPolicyJournal.com* and *CounterCurrents.org*. Much of the author’s work can be found at www.Armeniapedia.org/wiki/David_Boyajian.

VA Print Media



Book Printing & Binding • Hard Covers
College Dissertations • Year Books
Restoration of Old Books & Bibles
Newspaper Archiving



Vahe Atchabahian

1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104

Tel: 626-793-6220

Cell: 626-354-5924

vamedia@yahoo.com

www.vaprintmedia.com

Հայ Տպագիր Մամուլին Տագնապը



ՎԱՐՈՒԺ ԹԵՆՊԵԼԵԱՆ

Տպագիր հայ մամուլը կ'ապրի տագնապ մը եւ այդ տագնապին մէկ կարեւոր պատճառը թերեւս նոյնինքն արդիականութեան եւ անցեալէն ժառանգուած իտէլալականութեան բախումն է, յաճախ մէկը միւսին գոհելու մօտեցումին կամ անդիմազիծ ներդաշնակումի փորձերուն հետեւանքով:

Նախ պէտք է նշել որ տպագիր մամուլի տագնապը համաշխարհային տագնապ է յատկապէս համացանցի զարգացումէն ետք մամուլի թուայնացումին եւ բոլորին մատչելի դարձած լրատու կայքէջներուն (որակաւոր, անորակ եւ երբեմն զուտ բամբասանքային տարբերակներով) անհամեմատ տարածումին պատճառով:

Ինչպէս աշխարհի բոլոր ժողովուրդները, մեր ժողովուրդն ալ կը գտնուի արդիականութեան եւ թուայնացումի մթնոլորտի մէջ, բջիջային հեռաձայն, նկարահանման անձնականացում, videոներու եւ նկարներու անանձ շրջագայութիւն, Facebook, Twitter, Instagram եւ հազարումէկ միջոցներ՝ մատչելի բոլորին:

Այս պայմաններուն մէջ, տպագիր հայ մամուլին պահպանողական, զգոյշ, անցելապաշտ, տակաւին ոչ արհեստավարժ կամ կէս արհեստավարժ իրավիճակը որոշ հեռավորութիւն մը ստեղծած է իր եւ հայ ընթերցողին միջեւ: Անցեալի ժխտումին մասին չէ խօսքը, այլ առանց ներկային շողախելու եւ պատուաստելու՝ աւանդական միջոցներով աւանդական ոճին կառչած մնալու ուղղութեան մերժումն է:

Տակաւին չենք խօսիր ազատ խօսքի եւ ազատ քննարկումի բացակայութեան կամ կաշկանդումներուն մասին:

Բնական է, երբ մամուլին եւ ընթերցողին միջեւ բաց մը ստեղծուած է, ընթերցողը չի սնանիր մամուլին մէջ տեղ գտած գրութիւններով եւ նոյնքան կարեւորութեամբ՝ մամուլը չի սնանիր ժողովուրդին հակազդեցութեամբ, որովհետեւ ժողովուրդին հակազդեցութիւնը կարեւոր ազդակ է հրապարակագրութեան յառաջդիմութեան համար:

Նշուածին կողքին՝ կա՛յ նաեւ ոճի եւ լեզուի "անհասկացողութիւն" մը՝ գրութիւններուն եւ ընթերցողին միջեւ:

Մամուլը, առաջին հերթին, խօսքի բեմ է, դպրոց մը՝ հայ ժողովուրդի պարագային: Խօսք, որ պիտի արտայայտէ ժողովուր-

դին տենչերը, պիտի խօսի անոր սրտին ու մտքին, անոր պիտի փոխանցէ հայօրէն մտածելու եւ հայօրէն ապրելու աւել, անոր պիտի ծանօթացնէ ազգային եւ միջազգային կեանքի մանրամասնութիւնները, պիտի ընդգծէ տարբերութիւնները եւ, մանաւանդ՝ Հայաստանի պայքարին պիտի առաջնորդէ իր ընթերցողները: Անշուշտ այս բոլորին աւելնալով, իբրեւ մարդ եւ իբրեւ հայ՝ ինքնագիտակցութեան եւ ինքնավերլուծումի առաջնորդող խօսքերն ալ մեծ կարեւորութեամբ կը ներկայանան:

Այսօր տպագիր հայ մամուլը որքանով կը յաջողի այդ յանձնարու խօսքը հասցնելու ժողովուրդին եւ որքանով տեղեակ է անոր հակազդեցութեան:

Որակի մասին խօսելով՝ կը նկատենք, որ մեր նոր մտաւորականութիւնը, յանձնառու խօսքի մասին խօսելով հանդերձ, չի մտածեր, որ այդ խօսքը արդեօք հասա՞ւ ընթերցողին, արդեօք ի՞նչ հակազդեցութիւն ապրեցաւ ան, ի՞նչ բան փոխուեցաւ անոր մէջ, ի՞նչ բան պէտք է աւելցնել՝ ստեղծուած առողջ մթնոլորտ մը աւելի պայծառացնելու համար: Այսօր, մտաւորական հակացողութիւնը շատ բան կորսնցուցած է իր իմաստէն:

Մտաւորականը ինքզինք վերածած է ժողովուրդէն խզուած մտածող անձի մը, որ իր մտային կարողութիւններով կը տեսնէ ու կը վերլուծէ հարցերը, բայց զանոնք ժողովուրդին կը փոխանցէ այնպիսի՝ ձեւով մը, որ յաճախ կը ստիպուինք մտածելու, որ կա՛մ միայն ինքն իրեն համար կը գրէ կամ ալ սակաւաթիւ անձերու համար. երեւոյթ մը, որ ժխտումն է յանձնառու խօսքին: Այս երեւոյթը ընդհանրապէս կը դրսեւորուի կիրարկուած ոճի եւ լեզուի անհասկանալիութեան ընդմէջէն: Յանձնառու մամուլին խօսքը պէտք է հակացուցական գանգուածին կողմէ: Այս հաստատումէն մեկնելով, յանձնառու խօսքի փոխանցման ժամանակ, նկատի պէտք է առնենք ընթերցող զանգուածին մտաւորական պաշարը եւ լեզուական յատկութիւնները: Ի՞նչ արժէք ունին ամէնէն որակաւոր եւ լուրջ յօդուածներն անգամ, երբ անոնք չեն հասկցուի ժողովուրդին կողմէ: Անշուշտ ըսել չենք ուզեր, որ հարցերուն պէտք է մօտենալ փողոցի լեզուով եւ շփանիչներով (հակառակ անոր, որ յաճախ այս ձեւն ալ օգտակար է), այլ յանձնառու խօսքը պէտք է փոխանցել պարզ լեզուով եւ յստակ ոճով: Պարզութիւնն ու յստակութիւնը անորակութիւնն չեն ենթադ-

րեր, այլ՝ հասկնալիութիւն: Վերջի վերջոյ, նոյն միտքը, նոյն գաղափարը կարելի է յայտնել երկու ձեւով՝ կա՛մ պարզ ու յստակ, կա՛մ ճոռոմաբանութեամբ, դարձուարձիկ ու անյատակ ոճով: Դժբախտաբար, խորաթափանց քննարկումներն ու վերլուծումները յաճախ կը շփոթուին ուռուցիկութեան եւ պարզ բառերու փոխարէն՝ բառարանային հոմանիշերու գործածութեան հետ:

Այս պայմաններուն մէջ գարմանալի պէտք է թուի եւ դատապարտելի պէտք է նկատուի մեր ժողովուրդին կողմէ յաճախ կրկնուող "հայերէն գրեցէք, որ հասկնանք" պահանջը: Այս տեսակէտը անշուշտ չ'արդարացներ հայ մամուլին մէջ դրսեւորուող միւս ծայրեցեղութիւնը, որ անբծախնդիր ու թափթփած ոճով եւ լեզուով կը ներկայացնէ իր խօսքը, յաճախ ա՛յնքան անխնամ, որ կրկին անհասկնալի կը դառնայ, անորոշութեան կը մատնէ մեր ընթերցողները եւ որակին հետ կը գոհէ նաեւ խօսքին իմաստը:

Իսկ արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի խառնուրդ լեզուով արտայայտող գրեւածեւր աւերներ կը գործէ-երեւակայել որ մէկը կը գրէ անգլերէնի եւ արաբերէնի խառնուրդ լեզուով: Բաղդատութիւնը թերեւս ծայրայեղական է, բայց արեւմտահայերէնն ու արեւելահայերէնը նոյն ժողովուրդի տարբեր լեզուներն են՝ շարահիւսական ու իմաստային տարբեր համակարգով:

Անհրաժեշտ է մատնանշել նաեւ մեր հաւաքական աղքատութենէն ծնունդ առած հիմնական երեւոյթ մը՝ արեւմտահայերէնին տիրապետած եւ հրապարակագրութեան զանազան սեռերու մէջ մասնազիտացած իմբազիրներու սակաւութիւնը: Հաւաքական աղքատ-

ութեան այս ակնարկումը սակայն, ոչ մէկ ձեւով արդարանալի կը դարձնէ ստեղծուած իրավիճակին պահպանումը, որ կը շարունակուի: Վերջի վերջոյ, հայ կեանքին մէջ նաեւ կան ազդու ներկայութիւն ունեցող, յանձնառու կազմակերպութիւններ, որոնք, հայ ժողովուրդի գերագոյն շահերուն հետապնդման առաջադրանքով՝ յանձնառու խօսքի վարպետներու պատրաստութիւնը իրենց առաջնահերթ մտահոգութիւններէն մէկը պէտք է նկատեն: Ժամանակի հոլովոյթը եւ արդիականութեան հրամայականը մեզ պէտք է բերած ըլլան ա՛յն եզրակացութեան, որ սիրողական աշխատանքով (կամ անոնց գոհողութեամբ միայն), կարելի չէ հաւաքական կառույցները պահպանել եւ ազդու նուաճումներ իրագործել: Եւ այս կառույցներուն շարքին հիմնական տեղ կը գրաւէ հայ տպագիր մամուլը:

Իր ծայրահեղական նկարագրով, մեր ժողովուրդը երբ կ'որոշէ նորութիւն մը որդեգրել, ամէն գնով կը փարի անոր: Մեր ժողովուրդին կարեւոր համեմատութիւնը կը ստորագնահատէ հայ թերթը, որովհետեւ իր գնահատումով հայ տպագիր թերթը հնութիւն կը բուրդէ, »ծերերու« թերթ դարձած է միայն կ'ըսէ, եւ զայն կը փոխարինէ թուայնացած մամուլով կամ օտարալեզու թերթով:

Հայ տպագիր մամուլի պարզած վիճակին մասին եղած այս մատնանշումներով, համապարփակ վերլուծում մը կատարած ըլլալու եւ բոլոր թերութիւնները, դժուարութիւնները եւ լուծման առաջադրանքները սպառած ըլլալու յաւակնութիւնը չունինք, այլ իբրեւ փորձ՝ մատը ճիշդ վէրքին վրայ դնելու առաջարկ մը կ'ընենք հայ տպագիր մամուլի տագնապով մտահոգ շրջանակներուն:



Monrovia-ի Dignity գերեզմանատան մէջ պիտի տրամադրուի յատուկ Հայկական բաժին մը որուն անունը պիտի ըլլայ Արարատ:

Ծառ լաւ պայմաններով եւ յարմար ամսական վճարումներով:

Նախքան Ձեր ծրագիրներուն ու առաւելութիւններուն համար Ձեզի կատարակոյի՝

1_ Ձեր պայմաններուն եւ ծախսերու հարմար ծառայութիւններ
2_ Ունիք նաեւ թաղման ու յուղարկատրութեան ծառայութիւններ յարմար գիներով

Մանրամասնութեան համար դիմել՝
ISABEL CRISTINA KEMANIAN
 Pre-Planning Advisor

200 E. Duarte Rd., Monrovia, CA 91016
(818) 284-8754
 Email: isabel.kemania@sci-us.com



ԱՆԻ Կեդրոնը Հրատարակութեան և Պատրաստում Արտաշէս Վրոյրի «ԱՆԻՈՒՄ» Աշխատութիւնը



Հայկական ուսումնասիրութիւնների ԱՆԻ կեդրոնը հրատարակութեան է պատրաստում Արտաշէս Վրոյրի «ԱՆԻՈՒՄ» աշխատութիւնը: Այս արժէքաւոր գիրքը «Մովետական գրող» հրատարակչութիւնը հրատարակել է Երեւանում 1979 թուականին:

Այս հրատարակութեան առաջաբանում ասուում է

Արտաշէս Վրոյրը իր մանկութեան եւ պատանեկութեան տարիներին (1901-1917թթ.) եղել է Անիում, որտեղ նրա հայրը՝ նշանաւոր դերասան Արամ Վրոյրը, Մառի գիտարշաւի հետ տարիներ շարունակ մասնակցել է հնաւանդ քաղաքի պեղումներին:

Յետագայում ինքը՝ Արտաշէս Վրոյրը, արդէն երիտասարդ, դառնում է էքսպեդիցիայի խանդավառ աշխատակիցներից մէկը եւ ակտիւ մասնակցում է Անիի եւ շրջապատի վանքերի ու յուշարձանների ուսումնասիրութեան եւ նկարահանման գործին:

Պատմական Անին իր հոյակապ յուշարձաններով, վանքերով ու եկեղեցիներով, բերդերով ու պարիսպներով խորը, անջնջելի տպաւորութիւն է թողել մանուկ Արտաշէսի վրայ: Եւ նա իր մանկապատանեկան վառ տպաւորութիւններով ու յուշերով, չթուլացող հետաքրքրութեամբ, այնպէս է պատմում, որ ընթերցողի առաջ ուրուագծուում են հնադարեան քաղա-

քի կիսակործան շէնքերը, բերդերը, պարիսպները, ընդլատակեայ ուղիներն ու լաբիրինթոսները, շրջակայ ձորերն ու բլուրները եւ Անիի ոտքերի տակ լաւիտեան թաւալուող Ախուրեանը:

Արտաշէս Վրոյրն իր յուշերում սիրով ու երախտագիտութեամբ է նկարագրում գիտարշաւի անձնագոհ ու նուիրական աշխատանքը Անիում, ուր Մառի գլխաւորութեամբ մասնակցում էին՝ Աշխարհահեկ Լուու-Մելիք Քալանթարը, Յովսէփ Օրբելին, Թ. Թորամանեանը, Ն. Բունիաթեանը, Տարագրոսը, Ն. Տոկարսկին, Լեւոն Քալանթարը, Արամ Վրոյրը, Գ. Չուբինովը եւ ուրիշներ:

Հեղինակը թէեւ չի մտադրուել տալ գիտարշաւի մասնակիցների բնութագիրը, բայց պեղումների, նկարահանումների, հաւաքոյթների եւ զանազան դէպքերի սեղմ եւ պատկերաւոր նկարագրութիւնը հնարաւորութիւն է տալիս ընթերցողին պատկերացնել գիտարշաւի շատ մասնակիցներին:

Արտաշէս Վրոյրը ժլատ, բայց այնպիսի բնորոշ գծերով է բնութագրել յատկապէս մի քանի շարքային աշխատողների, որոնք ընդմիշտ մնում են ընթերցողի յիշութեան մէջ:

Գրքի հեղինակը՝ Արտաշէս Վրոյրը գրում է.

«Անիում եղել եմ համարեա ամէն ամառ՝ սկսած 1901 թուակա-

նից մինչեւ 1917-ը, մանկական հասակից մինչեւ պատանեկութիւն: Երբ առիթ է լինում յիշել կամ խօսել Անի քաղաքի մասին, մէկիկ-մէկիկ արթնանում են յիշողութեանս մէջ մանկական ու պատանեկան այն քաղցր օրերը, որոնք կապուած են եղել աւերակների քաղաքի հետ, որը սնուցել է իմ մէջ ճաշակ, գեղեցիկի գագացողութիւն:

Անիի գիտարշաւի աշխատակիցներն ու մշտաբնակները, որոնք այսպէս թէ այնպէս կապուած էին Անիի աշխատանքներին, համարուում էին անեցիներ: Ինձ եւս վիճակուեց կրել կրտսեր անեցու պատուաւոր անունը: Եւ ահա կեանքի վերջին տարիներին կրտսեր անեցին գրում է իր վտիտ յուշերը աւերակների քաղաքի մասին, որը նուիրական է ամէն մի հայի համար:

Ապրեցի աւերակների քաղաքում, տեսայ մեր անցեալի մեծ վարպետների ու հմուտ քարագործների կերտած հազարամեայ կեանք ունեցող ծանրանիստ պարիսպներն իրենց խորիստ բուրգերով ու հօր դարպասներով, կիսակործան տաճարներն ու պալատները, իջեւաններն ու կամուրջները եւ խորհրդաւոր այրերը: Տեսայ մեր նախնիների մամուռապատ գերեզմանները, գոռ ճակատամարտերի դաշտերն ու խոր ձորերը: Անցայ ստորերկրեայ Անիի յաւիտենական մթութեան մէջ խորասուզուած նեղ ու լայն անցքերով, տեսայ խորախորհուրդ վիշապակիր բուրգերը: Տեսայ բոլորը, բոլորը, որոնք դարերի խորքից եկել, հասել են մեզ իրենց բազմալեզու եւ բազմադիր յիշատակներով, որոնք ինչէր տեսան ու լսեցին, ինչէր ապրեցին խաղաղ մթնոլորտի, փոթորիկների եւ բռնութիւնների ներքոյ:

Տեսայ գիտուն մարդկանց, որոնք բազմամուտ գիտնականի դեկավարութեամբ, արեւի կիզիչ ճառագայթների տակ, պրպտում ու պեղում էին պատմական քաղաքի հողաթմբերն ու փլատակների շրջակայքը եւ դարաւոր հողի շերտերի տակից դուրս հանում մեր նիւթա-

կան մշակոյթի մնացորդները. վերծանում յիշատակարանների արձանագրութիւններն ու պատմութեան էջերին յանձնում իրենց աշխատանքի արդիւնքները: Տեսայ մեծ ճարտարապետին իր խորթափանց ու գննող աչքերով. նա չափագրում, գծագրում էր իր հմուտ ձեռքերով եւ պրպտումների ու որոնումների աշխարհն ընկած իր սուր մտքով վերլուծումներ անում եւ եզրակացութիւններ հանում հայ ճարտարապետութեան հոյակապ յուշարձանների մասին: Տեսայ աւերակների մէջ օրնիբուն քայլող խանդավառ արուեստագետին իր լուսանկարչական գործիքով եւ անխոնջ նկարչին՝ իր ներկերով ու վրձիններով: Տեսայ արեւակէզ դէմ քերով բանուորների, որոնք բահերով ու բրիչներով գինուած՝ զգուշօրէն աշխատում էին պեղումների վայրերում:

Տարիների ընթացքում ապրեցի այս գեղեցիկ շրջափակում, որն իբրեւ մի մեծ դպրոց պատուաստեց իմ մէջ ազնիւ գագացումներ ու վսեմ գաղափարներ»:

ԱՆԻ կեդրոնի կողմից
Եթէ կան անհատներ կամ կազմակերպութիւններ, ովքեր ցանկութիւն ունեն հովանաւորել այս արժէքաւոր ու ամէն հայի համար նուիրական այս հատորը, կարող են դիմել ԱՆԻ կեդրոնին.

էլեկտրոնային հասցէ՝ aniarcf@gmail.com,

Ֆէյսբուքի էջ՝ <https://www.facebook.com/ANI-Armenian-Research-Center-368185563353351/>

հեռախօս՝ + 374 98 65 53 21
ԱՆԻ-ն տեղեկացնում է, որ հատորում պատշաճ կերպով, առանձին էջի վրայ, կը նշուի հովանաւորի կամ հաստատութեան անունը, ցանկութեան դէպքում՝ յիշատակի խօսքը: Տպագրութիւնից յետոյ բոլոր շնորհանդէսների ընթացքում եւս յատուկ կը նշուի հովանաւորող անհատի կամ հաստատութեան անունը:

Հայկական ուսումնասիրութիւնների ԱՆԻ կեդրոն



Ջօրացիկ օժանդակենք Փրկենք
www.syrianarmenianreliefund.org

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948




INNOVATIVE
Designs Manufacturing, Inc.

idmifurnishings.com

Պատմական Անդրադարձ Սրբազան Քահանայապետ Ֆրանիսքոս Պապին Այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Յուճիս 24 - 26, 2016

Անցեալի բազմաշարժար Հայ Եկեղեցին որ կրցած է անխախտ պահել իր ինքնուրոյնութիւնը՝ իր հաւատքին եւ իւրայատուկ մշակոյթին շնորհիւ, ահա կը գտնէր իր պատուաւոր եւ արժանի դիրքը Յեղասպանութեան Հարիւրամեակին:



ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔՀՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Պատմական Այցելութիւն

Անտարակոյս երեք տարիներ առաջ Սրբազան Քահանայապետ Ֆրանիսքոս Պապին 2016 Յունիսի 24-26-ին կատարած այցելութիւնը Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին հրաւէրովը Ամենայն Հայոց Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Սերժ Սարգսեանին եղաւ պատմական ու աննախընթաց, պետական, եկեղեցական եւ զինուորական պաշտօնական լրիւ պատիւով եւ արարողակարգով՝ Զուարթնոց օդակայանէն ուղղակի Ս. Էջմիածին ժամանելով: Նկատի ունենալ որ Սրբազան Քահանայապետը վատիկանէն ուղղակի Երեւան ժամանեց եւ Երեւանէն ուղղակի վատիկան վերադարձաւ, առանց ուրիշ երկիր մը այցելելու ծրագրով: Նկատի ունենալ նաեւ որ իր մէջ առաջ հանգուցեալ Հռոմի Քահանայապետ Յովհաննէս-Պօղոս Բ. Պապը եղաւ հայոց պատմութեան մէջ առաջինը որ պաշտօնական այցելութեամբ Հայաստան ժամանեց 2001-ի Սեպտեմբերին՝ շնորհաւորելու համար Հայոց Քրիստոնէութեան Դարձի 1700 ամեակը: Մենք եւս ականատես եղանք այդ առաջին այցելութեան եւ հանդիսութեանց:

Երկու այցելութիւնները իսկապէս պատմական եղան այն իմաստով որ անցեալին նոյն Հռոմէական Եկեղեցւոյ կարծր դիրքը շատ հին ժամանակներէն, 451 թուի Քաղկեդոնի ժողովի խնդիրէն սկսեալ, լուրջ եւ անհանդուրժող պատճառներ յարուցած էր Հայ Եկեղեցւոյ նկատմամբ: Եւ ահա նոյն եկեղեցին կուգար յարգելու իր իսկ ժխտած Հայ Եկեղեցւոյ ծագման 301 թուականը, հաստատելու Հայոց քրիստոնէութեան դարձը որպէս առաջինը, եւ սրբազանը ամէն ինչ որ հակառակը կը յայտարարուէր հինգերորդ դարէն մինչեւ մեր օրերը, յատկապէս խաչակրութեան շրջանին, երբ Լատին Եկեղեցին բաժնուեցաւ նաեւ Յոյն Օրթոթոքս Եկեղեցիէն 1054 թուականին: Երկուքը իրարմէ բաժնուելով, մին ինքզինք կոչեց Կաթողիկ (ընդհանրական), եւ միւսը՝ Օրթոթոքս (Ուղղափառ):

Նոյն թուականին եղած այդ մեծ հերձուածը երկու մեծագոյն

եկեղեցիներուն Հռոմի եւ Բիւզանդիոնի միջեւ կը մնայ մինչեւ այսօր: Երկուքն ալ այն ատեն իրենց հաշուով Հայ Եկեղեցին կոչիտ կերպով իբր թէ հետեալ համարելով ուզեցին կղզիացնել Հայ եւ Արեւելեան եկեղեցիները՝ անտեսելով Հայ Եկեղեցւոյ գոյութիւնը որ իրենցմէ առաջ կար նոյնիսկ, որպէս անկախ եւ ոչ մէկէն բաժնուած եկեղեցի, քանի արդէն չէր միացած որեւէ մէկուն՝ բացի նախնական միացեալ եւ Քրիստոսաւանդ Եկեղեցիէն ուր արդէն բաժանում չկար: Երկուքին նպատակն էր դարերու հոլովոյթին Հայ Եկեղեցին իրենց ենթարկել: Տեսէք ինչ եղաւ մեր աչքին առջեւ: Ամէն ինչ շրջեցաւ ի նպաստ մեր Մայր Եկեղեցիին:

Տիեզերական Պատրիարքին Այցը

Յովհաննէս-Պօղոս Բ. Պապի առաջին այցելութենէն ամիս մը ետք Կ. Պոլսոյ Յոյն Տիեզերական Պարթիոյնի Ս. Պատրիարքը, որ այսօր կը գահակալէ իր պատմական Կ. Պոլսոյ Աթոռին՝ իսթանպուլի մէջ, ՏՏ Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետին հրաւէրով այցելեց Հայաստան ու Մայր Աթոռ, նոյն պատճառով, շնորհաւորելու Հայոց Մեծ Դարձին 1700-ամեակը: Ինք եւս խոնարհեցաւ իջման Սուրբ Սեղանին առջեւ, սրբազանը ամէն ինչ որ պատահած էր Բիւզանդիոնի Յոյն Ուղղափառ եւ Հայ Եկեղեցիներու միջեւ, անհամաձայնութիւն, կռիւ եւ նզովք: Միեւնոյն Եկեղեցւոյ ներկայ Տիեզերական Պատրիարքն էր որ կուգար Ս. Էջմիածին 2001 թուին:

Յիշենք այստեղ Բիւզանդիոնի Կոստանդին Բ. Կայսրը եւ Յունաց Տիեզերական Պատրիարքը որոնք բանակով Հայաստան արշաւեցին 653 թուականին, Ներսէս Գ. Տայեցի Կաթողիկոսին օրով (641-661) բռնի մուտք գործելով Դուրի նի Հայոց Կաթողիկոսանիստ Մայր Եկեղեցիէն ներս, եւ Կաթողիկոսին ու հայ եպիսկոպոսներուն ներկայութեան յունածէս պատարագ մատուցանել պարտադրելով յոյն քահանայի մը կողմէ, եւ ստիպելով որ ամէն ոք, Կաթողիկոսն եւ եպիսկոպոսներէն սկսեալ Սուրբ Հաղորդութիւն ստանային ու վերջնականապէս ենթարկուէին Օրթոթոքս Եկեղեցիին:

Սոյն դէպքը պատմողը 7-րդ

դարու յայտնի հայ պատմիչ Բագրատունեաց Եպիսկոպոս Սեբէոսն է որուն «Պատմութիւն ի Հերակլն» անուն գիրքը, Արաբաց արշաւանքներու եւ Յունաց յաղթանակներուն մասին նախնադոյն աղբիւրն է եւ միջազգային մեծ կարեւորութիւն ստացած որպէս ականատես պատմիչի: Սեբէոս կ'աւելցնէ ըսելով որ Կայսեր ստիպման տակ բոլորը, Կաթողիկոսն սկսեալ, հաղորդուեցան բացի մէկ եպիսկոպոսէ որուն անունը չի տար, որ ըստ Մաղաքիա Պատրիարք Օրմանեանի նոյն ինքն Սեբէոս եպիսկոպոսն էր: Ահա կենդանի եւ պատմական ստույգ միջադէպ մը որուն շառաւիղէն այսօրուան Յունաց Տիեզերական Պատրիարքը Պարթիոյն մէջ Ա. ի պատիւ իրեն կուգար ճիշդ հակառակը ապացուցանելու:

«Ուխտագնացութիւն» եւ «Յեղասպանութիւն»

Անկասկած Ֆրանսիսկոս Քահանայապետին այցը մեր գիտցածն է յուսացածն է շատ աւելի յատկանշական դրսեւորումներով բիւրեղացուց հայոց պատմութիւնը: Իր ճամբայ ելլելէն առաջ իսկ, Պապը յայտնած էր թէ Ուխտագնացութիւն մըն էր կատարածը դէպի Արարատի երկիրը եւ առաջին Մայր Տաճարը աշխարհի մէջ: Ինչպէս հանգուցեալ Յովհաննէս-Պօղոս

յայտնու յատուկ Պատարագ մատուց Ս. Պետրոս Մայր Տաճարին մէջ ի ներկայութեան բազմաշարժար ուխտաւոր հայերու, ի գլուխ ունենալով Ամենայն Հայոց Գարեգին Բ. եւ Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառ Կաթողիկոսները: Նոյն անվեհեր եւ հեռատես Պապը տարի մը ետք Հայաստան գալու հրաւէրը ընդունեց որպէս շարունակութիւնը Յեղասպանութեան Հարիւրամեակին, իր համոզումը կատարեալ դարձնելով:

Հայ Կաթողիկէները

Միւս կողմէ սակայն, մինչեւ մօտաւոր անցեալին, Հայ Կաթողիկէ Պատրիարքութիւնը «Պապէն աւելի պապական» ըլլալու ապացոյցը կուտար անտեղի եւ զարտուղի ճամբաներով, գայրոյթ պատճառելով ծերունագարդ վազգէն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, իր վախճանումէն երեք տարի առաջ: Երբ Հռոմէական Եկեղեցին գգաստ եւ քաղաքավար, անցեալի բարդութիւնները մէկդի դնելով, այլեւս չկրկնելով կարծեցեալ բաժանեալ եղբայրներու վերադարձի յանկերգը, մեր հայ Կաթողիկէները շրջաբերական մը մէջտեղ հանեցին ճիշդ Հայաստանի անկախութեան 1991 տարին, յայտարարելով որ «շնորհքի ժամը հնչած էր եւ Հայաստան պիտի



Բ. Պապը այցելեց Հայաստանի Մեծ Դարադարձին, նոյն տարողութեամբ եւ աւելիով, Ֆրանսիսկոս Պապ այցելեց երբ ուխտագնացութիւն բառը յաճախ արտասանեց, արտասանելով նաեւ նախորդ տարին վատիկանի մէջ իր մատուցած Ս Պատարագի ընթացքին հայոց նկատմամբ եղած ցեղասպանութիւնը, ինչպէս նաեւ 2016 Յունիսի 25-ին՝ Միծեռնակաբերդի բարձունքին:

Ուխտագնացութիւն բառը Սրբազան Պապին մտքին մէջ ամենալուրջ բերկրանքով մտածուած եւ արտասանուած բառ մը եղաւ, քանի իր մտքին մէջ շատ լուրջ պատկեր մը կը գծէր այդ բառը, թէ ուր կ'երթար սրբութիւն մը կար որուն առջեւ պիտի խոնարհէր: Յիրաւի երեքը միասին, Հռոմի երկու Սրբազան Պապերը եւ Յունաց Տիեզերական Պատրիարքը պատուեցին Հայաստանն ու հայ եկեղեցին անձնապէս եւ յանուն իրենց եկեղեցիներուն: Պատիւ իրենց:

Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակը կարեւոր փորձաքար մը հանդիսացաւ մանաւանդ վատիկանի կողմէ ուր Քահանա-

արշաւէին քրիստոնէութիւնը վերականգնելու», կարծես թէ հոն Հայ Եկեղեցին դարերով գոյութիւն չունէր, եւ իր անցեալի 130 Կաթողիկոսները նստած կը սպասէին հայ Կաթողիկէներուն:

Վազգէն Հայրապետ գայրացաւ պատրիարքական շրջաբերականին մէջ կարողալով մանաւանդ այն մասին թէ հինգերորդ դարէն ի վեր Հայ Եկեղեցին իբր թէ բաժնուեր էր կաթողիկէ եկեղեցիէն՝ հետեալ եւ անվաւեր եկեղեցի մը նկատելով գայն՝ պատմութիւնը հիմնովին խեղադիւրեցրով: Հայ Կաթողիկէներ չեն ուզեր յիշել իրենց ծննդեան թուականը, որ 1740 թուականն է որ շատերու անձանօթ կրնայ ըլլալ, երբ իրենց առաջին եպիսկոպոսը՝ Հայկապի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հայ Առաքելական Եկեղեցիէն բաժնուած, Աբրահամ Արծիւեան անունով եպիսկոպոսն էր, որ երկու տարի ետք 1742-ին, ինքնագլուխ Հռոմի ենթարկուելով, Բենետիկտոս ԺԴ. Պապին Պատրիարքի դիրքը ստացաւ: Այստեղ կը հաստատուի հայ Կաթո-

Հայրենի Կեանք եւ Յիշատակելի Ծառայութիւն

Ռ. ԿՈՐԻԻՆ

Մայիսեան շաբաթ օր էր, առաւօտեան կողմերը կէսօրից առաջ, կարելի էր ասել հաճելի օդ շնչելիս մեզմէ քամու հոսանք, այս տարի բացառիկ օդերեւութային վիճակ յաճախակի անձրեւներ գով ցերեկներով եւ ցուրտ գիշերներով: Այսպիսի մի օր ես ու Շաւարշը ըստ հրաւերի հասել էինք Համոյենց առանձնատուն-բնակարանի դռան առջեւը, ձեռքը կոչնակին սպասում ենք դռան բացուելուն, ներսից փորձ էր արւում, սակայն անօգուտ, դուռը կպել էր շրջանակին, ինչպէս երկաթը մագնիսին, ներսից մի ձայն կանչ էր տալիս՝ «- դուռը հրէք, որ բացուի: Դուռը բացուեց, մեր դիմացն ելաւ Համոյի կինը՝ տիկ. Յասմիկը կողքին բարեգէյմ մի երիտասարդ, ըստ սովորականի տիկ. Յասմիկը խնդուներէս մեզ ընդունեց եւ ներկայացրեց երիտասարդին՝

-էդուինն է՝ տղաս: Առաջին անգամ հանդիպում եւ լաւ տպաւորութիւն: Առաջնորդուեցինք դէպի սեղանատուն, այդ միջոցին էլ Համոն շնորհ բերեց, սեղանի շուրջը տեղ գրաւեցինք, սեղանը զարդարուած էր թիւղած քներով եւ մրգերով: Մեր ներկայութիւնը Համոյի ցանկութեամբ էր եղել, նա թէ՛ ինձ եւ թէ՛ Շաւարշին զանգեցրելով ասել էր՝

-Նկատելով առողջութիւնս լաւ է, ուզում եմ, որ առաւօտեան գաք մեր մօտ, միասին կը սրճենք, ապա կը գնանք ճաշարան ճաշելու համար, ինձ ուրախացրած կը լինէք ձեր գալով:

Համոն մի քանի տարի պակաս հարիւրամեակից ընդհանուր առմամբ ֆիզիքական առողջ վիճակում է գտնուում: Համոյի հետ ծանօթութիւնս սկսուել է իր կազմակերպած բաւական չափով նկարչական ցուցահանդէսից: Նա ուշ տարիքում է սկսել նկարել, բայց փոքրուց սէր է ունեցել անթեղուած: Նա 40 իւղաներկ նկարներով՝ բազմերանգ ու բազմաբնոյթ, ցուցահանդէս էր կազմակերպել սրահի շուրջ պատերը զարդարելով: Նա գոհունակութեամբ ասում էր.

- Իմ տարիքս չափանոց նկարներ եմ նկարել, սրահի փոքրութեան պատճառով յիսուն կտաւնկարներս գտնուում են պահեստանոցում:

Նա կեանքի վերջին տասը տարիներումն է նկարել, նրանից առաջ իր կարեւոր սեփական գործն է ունեցել մեծ թուով գործաւորներ աշխատացնելով: Նա պատանի տարիքից արհեստի է հետեւում եւ հետեւողական աշխատանքով ու ճիշտ ծրագրաւորումներով գործը բարգաւաճում եւ ընդարձակում է շէնքերի օդափոխութեան կապուղ սարքաւորումներ արդիւնաբերելով, որի շնորհիւ ճանաչողութիւն է վաստակում իրանի արդիւնաբերութեան բնագաւառում որպէս փնտրող ճարտար-ուեստի գործարար:

Հինգ հոգով սեղանի շուրջը Հայաստանի շուրջ գրոյց էր գնում: Ճիշտ է բնութագրել այն անձը, կարծեմ նշանաւոր գրող՝ Վարդգէս Պետրոսեանն է եղել՝ երբ մի քանի հայեր արտերկրում հաւաքուած են իրար շուրջ իրենց առաջնահերթ նիւթը Հայաստանի եւ նրա իրադարձութիւնների մասին է: Այո՛, իսկապէս էլ հէնց այդպէս է, սա

նրանց ներքին հոգեկան կապն է ցուցաբերում՝ սէրը, կարօտը, հետաքրքրութիւնը եւ մտահոգութիւնները, քանզի նրանք հայրենիքով են ապրում, նրա յաջողութիւններով ու վերելքով գօտեպնդւում:

Խօսակցութիւնը շարունակուելով նիւթ դարձաւ վերջերս դատարանների մուտքը փակող եւ աշխատանքները խափանող ընթացքը: Դատարանների փտածութեան եւ կաշառակերութեան վիճակը ժառանգութիւնն է սովէտից եւ ոչ արմատական փոփոխութեամբ շարունակուել է երեք նախագահների անտարբերութեամբ երեսուն տարիների ընթացքում: Պահանջ եղաւ, որ արդար եւ անկախ դատական կառույց ունենալ, հիմք ծառայելով երկրի զարգացման եւ ի վստահութիւն կառավարութեան գործունէութեան:



Համո Սուսայեան


Յոյս յայտնուեց կառավարութիւնը սրտցաւութեամբ կանխ ամէն ինչ երկրի ազգային շահերից ելելով դէպի ժողովրդի բարօր կեանք եւ ձգտում դէպի բարգաւաճում եւ հզօրացում: Սակայն դժուար կը լինի շուտափոյթ լուծում բոլոր հարցերի նկատի առնելով Հայաստանի ներքին վիճակը եւ պատերազմի վտանգը:

Արցախի մասին քննադատական մօտեցում եղաւ Միւնխի Համալսարանի պատմա-քաղաքագիտական մասնաբաժնից: Նա քանի տարիներ անարդարացի հարցի ձգձգումը: Արեւի պէս պարզ է, որ Արցախը պատմականօրէն եւ փաստացիօրէն հայկական տարածք է, թող նրանք արդարամտութիւնը ունենան եւ հաստատեն հայերի պահանջարկը, ոչ թէ մէկ սալին խփեն մէկ սանդիւն իրենց շահերին հետամուտ լինելով: Հայ իշխանաւորներ դուք էլ իրենց նման աղուէսանման ճարպիկ քաղաքականութիւն վարէք երկրի շահերը պաշտպանելով: Օտարամտութիւնը ախտ եւ քաղցկեղ է, թող մենք մեզի գանք, եթէ ոչ միշտ խեղճ ու շահագործող պիտի ապրենք: Տեսնում էք թէ նրանք ինչպէս մեր արդարացիութիւն-իրաւունքը անտեսում են թուրքին սիրաշահելու համար, շիտակ է, որ քաղաքականութիւնը դանակ է ուղմակ, ուստի պէտք է զգոյշ ազգային ռազմավարական քաղաքականութիւն վարել: Սովետի ժամանակ ռուս իշխանաւորները Արցախը, Նախիճեանը եւ այլ տարածքներ թուրքին յանձնեցին, հիմա էլ հէնց նոյնն է, միայն մականն է փոխուել: Թող մեր դաշնակիցը մէկ բերան ասի՝ Արցախը հայկական տարածք է եւ հայերին է պատկանում: Այդ ոչ զօրակցութեան ֆոնի ներքոյ մեր աննման գաւակների գոհաբերութեամբ հայ ժողովուր-

դը պատերազմում յաղթելով տէր է դարձել գոնէ իր մէկ մասի սեփական տարածքին եւ զիջումի հարց լինել չի կարող, իրօք որ ամօթ է, թուլամորթութիւն եւ ապագայ-նութիւն է այսքան երիտասարդ կեանքների գոհերից յետոյ զիջումից խօսել, այլ պիտի խօսել պահանջատիրութիւնից, որ զաֆթուած տարածքներ կան, Սոււմ-գայի թի հայ բնակիչների ցեղասպանութիւն, շուրջ չորս հարիւր հազար արտաքսուած հայութեան ունեցուածքի բռնագրաւման հարցեր եւ այլն:

Այս նիւթերից յետոյ նաեւ կարեւորութեամբ Համոն եւ Յասմիկը մէկը միւսին լրացնելով լիշատակեցին իրենց ազգականներից Խուզան (Խուզադատ-Աստուածատուր) մարդու ծառայութիւնները իրանի ամենակրօնական Ղօմ քաղաքում որպէս տեխնիկատանագործ, նաեւ բժշկական որոշ հմտութիւններով լիշատակութեան արժանի ծառայութիւններով:

Նրա մանկութիւնը սկսում է իրանի Սուլթանաբադ գաւառի Ազնա գիւղաքաղաքից, գիւղական ուսումն աւարտելուց յետոյ Թեհրան է տեղափոխուում, աշխատանքի է անցնում



Խուզան Նայթրեմօղեան

Ատամնաբոյժ Յովհաննէս Նազարեանի մօտ, հմտանում է, ապա Ղօմ է գնում այնտեղ աշխատելու: Գրեթէ Ղօմում մատի վրայ հաշուող հայեր են ապրել այն էլ աշխատանքի բերումով: Այդ օրերին Ռեզաշահի ժամանակ ճաշարանի սեփականատէր էր սուլթանաբադցի Ամիր Ամիրեանը, Խուզանի համագաւառացի, որի հետ նա մտերմիկ յարաբերութիւններ է ունենում: Խուզանը ինքնաշխատութեամբ լաւապէս տիրապետում է պարսկերէն լեզուին: Խուզանի տարիների ընթացքում իր բնաւորութեամբ, ծառայասիրութեամբ, մարդասիրութեամբ, վստահելիութեամբ, հաւատարմութեամբ եւ իր գործի գիտակցութեամբ ու ձեռներէցութեամբ մեծապէս ճանաչում է գտնում Ղօմում ի մասնաւոր իր օճակական շրջանակներում:

Պատմում է թէ՛ պարսիկ ատամնաբույժները ժողով են գումարում բժիշկների խորհուրդ կեանքի կոչելու համար, բոլոր ներկաների ցուցամատը ուղղուում է դէպի Խուզանը միաձայնութեամբ նրան նախագահ առաջարկելով, սակայն նա կտրուկ հրաժարուելով տրամաբանում է՝

-Յարգելիներս, դուք բոլորը համալսարանաւարտ բժիշկներ էք, իսկ անձս տեխնիկ արհեստավար չառանց բարձրագոյն ուսմամբ ինչպէս կարող եմ այս պատուարժան խորհուրդը ղեկավարել, ես երբեք ինձ չեմ ներելու այս պաշտօնի համար, խնդրում

եմ ձեզանից մէկնումէկին ընտրել:

Ներկաները հիացած Խուզանի համեստ եւ գիտակից արտայայտութեան վրայ ընթացք են տալիս այլ մէկի ընտրութեամբ:

Համոն մի յուշ է պատմում Խուզանի մասին ասելով՝

-Ես Ղօմի համալսարանի հանրակացարանի համար օդափոխութեան կապուղ սարքաւորումներ էի տեղադրել, հսկայ մեծ գումար էր ներկայացնում պայմանագիրը, վճարուելիք մէկ շօշափելի մասը յանձնախումբը ձգձգում էր, երեւում էր անձնական շորթելու միտում կայ: Գործարանիս պարսիկ ճարտագէտի հետ Ղօմ նրանց մօտ գնացինք, բոլոր անդամները ներկայ էին, նրանք չէին իմանում որ Խուզանը իմ քեռին է, երբ յայտնեցի նրա անունը, նրանք շփոթուած ասացին,

-ինչո՞ւ սկզբից ելեթ չասացիք:

Այսպէս Խուզանի անունը մեզ տէր դարձրեց մեր կորցուելիք գումարին:

Խուզանը երիտասարդութեան օրերին սիրահարուում է մի հայ աղջկայ վրայ, երբ իմանում է աղջիկը անբուժելի հիւանդութիւն ունի չի հրաժարուում ամուսնանալուց, նրան ուրախացնելու եւ երջանկութիւն պարգեւելու համար հարսանիք է կազմակերպում, վեց ամսից աղջիկը մահանում է, սուգն ու վիշտը խորապէս ազդում են նրան, այնպէս որ նրա լիշատակը վառ պահելու համար կատարում է մեծ գոհողութիւն մինչեւ կեանքի վերջը ամուրի մնալով, նուիրուածութեան եւ անբասիր սիրոյ արդիւնք:

Խուզանը զգալով ծերանում է, նա իր ազգականի տղայ Հրանդին Ղօմ է տանում, ուսման է դնում եւ իր գործը նրան փոխանցելով տեղափոխում է Թեհրան: Նա Հրանդի կնոջ հոգատարութեան ներքոյ ծերութեան օրերն է ապրում, ապա 1980-ին, 80 տարեկան հասակում հոգին աւանդելով շուրջ ու հոծ յուղարկաւորների ուղղեկցութեամբ թաղում է Թեհրանի «Նոր բուրաստան» գերեզմանատնում:

Խուզանը մէկն էր այն հազարաւոր հայերից, որ իր գործի բերումով եւ մարդասիրական ազնիւ հոգեբանութեամբ շատ-շատերի օգտաւէտ եղաւ, սրտեր շահեց, որպէս արժանաւոր հայ նրան յարգում ու մեծարում էին Ղօմում կոչելով՝ «Դոկտոր Խուզան»: Թեհրանից ծանօթ համագիւղացիներ, բարեկամներ եւ հարազատներ երկար ճանապարհ էին կտրում նրա մօտ ատամ սարքելու համար:

Ահա լիշտելով Խուզանին կ'ուզէինք մեր շնորհակալութիւնն ու երախտագիտութիւնը յայտնել այն բոլոր հայերին, որ հն սկզբից ելեթ իրենց աշխատասիրութեամբ, նուիրուածութեամբ եւ հաւատարմութեամբ իրենց անվերապահ ծառայութիւններն են բերել իրանին տարբեր ասպարէզներում բարձր պահելով մեր համայնքի եւ ազգի պատիւն ու անունը:

Այս գրութեամբ լիշտեցինք ողորմած հոգի Խուզանին ի մտի ունենալով որ ոչինչ չի մոռացում, արժանի ծառայութիւնները մնում են յետագայ սերունդները սրտերում, զրի է առնում եւ արժանաւորութեամբ լիշատակում է:

Մարդը գնացում է, սակայն գործն է լիշտում անմոռաց:

Ձեր Հոգին Թունաւորող 35 Սովորութիւն, Որոնցմէ Պէտք է Ազատիլ Շատ Արագ

- 1) Վերջ տուէք խնդիրներէն փախչելուն: Համարձակօրէն նայեցէք անոնց դէմքին: Որքան շատ անտեսէք զանոնք ու խաբէք ձեզ, այնքան աղետալի կը դառնան անոնք:
- 2) Դադարեցուցէ՛ք ձեր երջանկութիւնն ու կեանքէն բաւարարելը այլոց ձեռքը չանձնելը: Ամէն ինչ կախեալ է բացառապէս ձեզմէ: Ոչ ոք մեղաւոր է ձեր երջանիկ չըլլալուն մէջ:
- 3) Մի վախնաք սխալելէ: Բոլորն ալ կը սխալին, եւ դուք բացառութիւն չէք: Ընդունեցէ՛ք զանոնք: Մեծցէ՛ք անոնց վրայ:
- 4) Վերջ տուէ՛ք պատմելու դուք ձեզի, որ ոչինչ կ'իրականացուի, քանի դեռ չէք փորձած ու չէք ըրած այն ամէնը, ինչը ձեր ուժերու սահմաններուն մէջ է:
- 5) Վերջ տուէ՛ք անտեսելու այն բաները, որոնք իսկապէս կարեւոր են ձեզի համար:
- 6) Վերջ տուէ՛ք ուրիշ մարդոց պահանջներն ու ցանկութիւնները աւելի վեր դասելուն, քան ձերը: Հոգ տարէ՛ք դուք ձեզի: Դարձէ՛ք դուք ձեր լաւագոյն ընկերը այս աշխարհին մէջ:
- 7) Վերջ տուէ՛ք բոլորին հաճելի ըլլալ փորձելուն: Դուք հարիւր տոլարնոց թղթադրամ չէք, որ հիացմունք յառաջացնէք: Պարզապէս դարձէ՛ք ձեր լաւագոյն տարբերակը: Եզրակացութիւն՝ մի փախչիք խնդիրներէն: Աւերեսուեցէ՛ք անոնց հետ ու լուծեցէ՛ք հերթականութեան կարգով: Որքան շատ փախչիք անոնցմէ, այնքան աւելի մեծ կը դառնան անոնք:
- 8) Վերջ տուէ՛ք որեւէ բան ընելու համար յարմար ժամանակի սպասելուն: Այդ ժամանակը այստեղ եւ հիմա է: Ատոր համար ալ օգտագործեցէ՛ք իւրաքանչիւր վայրկեանը, որ ուրախանաք կեանքի ամէն մէկ պահով ու երջանիկ ըլլաք:
- 9) Վերջ տուէ՛ք ժամանակ անցընելուն անոնց հետ, որոնք ձեզի կը նեղացնեն կամ կը ստորացնեն: Աշխարհը լի է լաւ ու անկեղծ մարդոցով: Միթէ՛ պարտադիր է ձեր կեանքի թանկարժէք ժամանակը վատնել վատ մարդոց վրայ:
- 10) Վերջ տուէ՛ք քննադատել զուրք ձեզ միայն այն պատճառով, որ մէկը ձեր մասին որեւէ բան այնպէս չէ ըսած կամ չէ նայած: Ձեր ինքնագնահատականը կու գայ բացառապէս ձեր ներսէն, եւ կախեալ չէ արտաքին հանգամանքներէն ու օտար լեզուներէն:
- 11) Վերջ տուէ՛ք աշխատելու ուրիշներու երազանքները իրականացնելու ուղղութեամբ: Միթէ՛ դուք ձեր սեփական երազանքները չունի՞ք, կամ անոնք պակաս կարեւոր են: Նպատակներ դրէ՛ք ու անոնց իրականացման ընդառաջ գացէ՛ք խիզախօրէն, գլուխը վեր պահած: Անոնք ձեզի համար պէտք է ըլլան ամենակարեւորն ու առաջնահերթը:
- 12) Վերջ տուէ՛ք նախանձելուն կամ խանդելուն ուրիշի յաջողութեան: Կա՛մ ըրէ՛ք այնպէս, որ հասնիք նոյնպիսի բարձունքներու, կա՛մ հաշտուեցէ՛ք այն բանի հետ, ինչ ունիք, ու մի նեղանաք:
- 13) Վերջ տուէ՛ք հաւատարմութիւնն այն բանին, որ դուք ոչինչ կրնաք փոխել: Ատիկա սխալ է: Կրնաք եւ կը փոխէ՛ք՝ եթէ կ'ուզէ՛ք:
- 14) Վերջ տուէ՛ք շփոթութիւն, երբ ձեզ կը գովեն, եւ հակառակը՝ մի չափազանցէ՛ք քննադատութիւնը: Աշխատեցէ՛ք ամէն ինչ հակառակը

- ընել, ատիկա բարդ չէ եւ շատ օգտակար է:
- 15) Վերջ տուէ՛ք կեդրոնանալու այն բանի վրայ, ինչ դուք կ'ուզէ՛ք: Ատոր փոխարէն՝ մտածեցէ՛ք այն մասին, որ ինչի կ'ուզէ՛ք հասնիլ եւ ինչպէս պիտի ընէ՛ք այդ քայլը:
- 16) Մի վախնաք սխալներէն: Գործեցէ՛ք: Ձի սխալի միայն ան, ով ոչինչ կ'ընէ:
- 17) Վերջ տուէ՛ք ձեզ անվերջ ուրիշներու հետ համեմատելուն: Անոնք անոնք են, իսկ դուք՝ դուք: Դուք բացառիկ էք ու հիասքանչ, ինչպէս եւ երկրագունդի վրայ ապրող իւրաքանչիւր մարդ:
- 18) Վերջ տուէ՛ք դատարկ ժամանակ վատնելու տուայտանքներու վրայ այն առիթով, ինչ դուք չէք կրնար փոխել:
- 19) Վերջ տուէ՛ք հաւատարմութիւնն այն բանին, որ ուրիշ մարդոց կարծիքը աւելի կարեւոր է, քան ձեր սեփական կարծիքը:
- 20) Վերջ տուէ՛ք համարելուն, որ դուք ժամանակ չունիք այն բաներու համար, որ կը սիրէ՛ք: Դուք կրնաք ժամանակ կորզել իւրաքանչիւր բանի համար: Պէտք է միայն ուզել, իսկ եղանակները կը գտնուին:
- 21) Վերջ տուէ՛ք ուրախութիւնը յետաձգելուն: Ուրախացէ՛ք այստեղ եւ հիմա, մի սպասէ՛ք Նոր տարուան կամ արձակուրդին:
- 22) Վերջ տուէ՛ք դուք ձեզ իւրաքանչիւր սխալի կամ անկատարութեան համար խարազանելէ: Դուք ընդամենը մարդ էք, այլ ոչ թէ՛ Աստուած:
- 23) Վերջ տուէ՛ք ամենափոքր դիմադրութեան ճանապարհը ընտրելէ: Ատիկա վատագոյնն է, ինչ դուք կրնաք ընել ձեզի համար: Ատիկա ձեր ճանապարհը չէ, դուն արժանի էք աւելիին:
- 24) Վերջ տուէ՛ք ձեզ համեմատելու ուրիշներու հետ: Թող անոնք ապրին այնպէս, ինչպէս հաճելի է իրենց համար, իսկ դուք ինքնուրոյն կայացուցէ՛ք ձեր որոշումը:
- 25) Վերջ տուէ՛ք ուրիշ մարդոց ձեր սեփական այն յաջողութիւններու եւ դժբախտութիւններու համար մեղադրելէ: Դուք միայնակ պատասխանատուութիւն կը կրէ՛ք ձեր կեանքին համար, եւ ուրիշ ոչ ոք:
- 26) Վերջ տուէ՛ք անկումներու եւ վերելքներու հանդէպ ունեցած վախին արտօնելուն, որ ձեզ խանդարէ՛ք ձեր երազանքներու իրականացման ճանապարհին: Երազեցէ՛ք ու գործեցէ՛ք:
- 27) Վերջ տուէ՛ք սպասելուն, որ հանգամանքները իրենք իրենց պիտի փոխուին: Կրաւորական հանդիսատես մի ըլլաք, դուք փոխեցէ՛ք ձեր կեանքը:
- 28) Վերջ տուէ՛ք ձեր ուժն ու հոգեկան ուժերը անցեալի սխալներուն համար գղջալու վրայ վատնելուն: Արդէն ոչինչ կը փոխուի: Եզրակացութիւններ ըրէ՛ք եւ շարունակեցէ՛ք առաջ ընթանալ:
- 29) Վերջ տուէ՛ք ներողութիւն խնդրելու համար ամէնալուսն, երբ սխալած էք: Ներողութիւն խնդրեցէ՛ք ու առաջ գացէ՛ք: Ձեզ մեծ գործեր կը սպասեն:
- 30) Վերջ տուէ՛ք դուք ձեզմէ կատարելութիւն եւ անթերիութիւն պահանջելուն: Միրեցէ՛ք դուք ձեզ: Եղէ՛ք ձեր դաշնակիցը, այլ ոչ՝ քննադատը:
- 31) Վերջ տուէ՛ք մեղաւոր

5 Յայտանիշ, Որոնցմով Կարելի է Հասկնալ Դուք Տղամարդուն Համար Հաճելի՞ Էք, Թէ՞ Ոչ

- Առաջին ժամադրութեան մանրակրկիտ կը նախապատրաստուին ոչ միայն կանայք, այլեւ՝ տղամարդիկ: Նոյնիսկ կը չուզուին հանդիպումէն առաջ: Կը պատահի, որ մարդիկ իրարու համար հաճելի չեն ըլլար: Յաճախ կանայք իրենց հարց կու տան՝ արդեօ՞ք հաւնեցաւ զիս:
 - Ահա քանի մը յայտանիշ, որոնցմով կարելի է հասկնալ՝ հաւնած է քեզ, թէ՞ ոչ:
 - Ժպիտը- Եթէ տղամարդը կը ժպտի, բայց ո'չ լիարժէք, ուրեմն ատոր արժէ ուշադրութիւն դարձնել: Հոգեբանական առումով ատիկա կը նշանակէ, որ կիներ հետաքրքրական չէ, իսկ ժպիտը զուտ խորհրդանշական է, որպէսզի գրոյցը չընդհատուի:
 - Հպում- Եթէ տղամարդը կը փորձէ հպիլ ձեզի, ուստի, ամենայն հաւանականութեամբ, ան դասական կնամոլ է: Եւ դուք հրաշալի կը հասկնաք, որ անոր պէտք չեն սէր եւ ռոմանթիկ պահեր, այլ պարզապէս քանի մը անգամուան մերձեցում, եւ այդպիսի չարաբերութիւնները ոչ մէկ լաւ բանի կը յանգեցնեն:
- «Լաւագոյն Կառավարիչը Ան է, որ Կրնայ Ինքզինք Կառավարել».
- Արաբական Իմաստուն Մտքեր
- 1) Աւելի զլիսաւորած ոչ խարի հօտը կը յաղթէ ոչխարի դեկավարած առիւծներուն:
 - 2) Միայնները ժխտելը կրկնակի սխալ է:
 - 3) Խելօքը կը հասկնայ, եթէ անոր աչք ընես, իսկ չիմարը չի հասկնար, անգամ եթէ հրեա զինք:
 - 4) Խելամիտ կիներ շաքար կ'աւելցնէ այն ամէն խօսքին, որ կ'ըսէ տղամարդուն, եւ կը հեռացնէ ողջ աղը այն ամէնէն, ինչ տղամարդը կ'ըսէ իրեն:
 - 5) Մէկ ձեռք բերած փորձը եօթը իմաստութեան կանոններէն կարեւոր է:
 - 6) Քնքուշ խօսքերով ու բարութեամբ կարելի է փիղը մագնէ կապած տանիլ:
 - 7) Քամիները այնպէս չեն փչել, ինչպէս կ'ուզեն նաւերը:
 - 8) Եթէ դարբինի սալ դարձած ես, դիմացիդ, իսկ եթէ մուրճ՝ խփէ:
 - 9) Ով որ առանց թերութիւններու ընկեր կը փնտռէ, ան միայնակ կը մնայ:
 - 10) Միայն արեւոտ օրերը անապատ կը ծնին:
 - 11) Եթէ չարիքը կողքիդ կանգնած է, նստիլ առանց շարժելու:
 - 12) Անհնար է գգալ ժամանակը առանց շարժման:

- Յաջորդ ժամադրութիւնը- Եթէ տղամարդը հանդիպումէն քիչ անց կը խօսի յաջորդ ժամադրութեան մասին, ուստի հաւանական է, որ ան կ'ուզէ հնարաւորինս շուտ ազատիլ ձեր ներկայութենէն: Այնպէս որ չ'արժէր ձեր թանկարժէք ժամանակը ծախսել նման մարդու վրայ: Առաջինը դուք հեռացէ՛ք: Անոր այդպէս ալ պէտք է:
- Կը նայի շուրջը- Այն պարագային, երբ տղամարդը ձեզ հետ շփուելու պահուն կը նայի շուրջը, ուստի, ամենայն հաւանականութեամբ, դուք անոր անհրաժեշտ չափով չէք հետաքրքրած եւ ան չի համբերեր, թէ երբ պիտի երթայ:
- Ժամանակ է ընկերներուն հետ- Երբ տղամարդը առաջին հանդիպման կու գայ ընկերոջ ուղեկցութեամբ, ուստի, ամենայն հաւանականութեամբ, ձեր հետ հանդիպումը անոր համար հակառակ նշանակութիւն չունի: Չէ՞ որ ժամադրութեան, առաւել եւս՝ առաջին, պէտք է ըլլալ միայն երկուքով, որպէսզի ոչ ոք եւ ոչինչ չեղէ ձեզ: Չէ՞ որ պէտք է ճանչնալ իրարու, իսկ կողմնակի մարդիկ միայն կը խանգարեն:
- 13) Եթէ հոգիիդ մէջ մնացած է թէկուզ մէկ ծաղկած ճիւղ, անոր վրայ միշտ երգեցիկ թռչուն կը նստի:
- 14) Հպարտութեան յաղթելով՝ մարդը հաճելի կը դառնայ, կատարելութիւնը յաղթահարելով՝ ուրախ կը դառնայ, կիրքը սանձելով՝ յաջողակ կը դառնայ, իսկ ընչաքաղցութեան յաղթելով՝ մարդը երջանիկ կը դառնայ:
- 15) Լաւագոյն կառավարիչը ան է, որ կրնայ ինքզինք կառավարել:
- 16) Եթէ կը վախնաս, մի՛ ըսեր, եթէ ըսած ես, մի՛ վախնար:
- 17) Յաղթանակը ցոյց կու տայ, որ մարդը կրնայ, իսկ պարտութիւնը՝ թէ ինչ արժէք ունի ան:
- 18) Մի բանար այն դուրը, որ դուն ի վիճակի չես փակելու:
- 19) Իրենց մանր թերութիւնները կանանց չնորոգ տղամարդիկ՝ երբեք չեն վախել անոնց մեծագոյն արժանիքները:
- 20) Եթէ գաղտնիքներդ քամին կը պատմես, զինք մի մեղադրեր, որ զանոնք ծառերուն կը պատմէ:
- 21) Եթէ հնարաւոր չէ հասնիլ ամէն ինչի, չ'արժէր հրաժարիլ մէկ մասէն:

զգալուն այն բանին համար, որ ժամանակ կը յատկացնէք դուք ձեզի: Դուք միակն էք ձեզի համար:
- 32) Վերջ տուէ՛ք անդադար գբաղած ըլլալուն: Ատիկա անհեթեթ է ու ոչ-արդիւնաւէտ:
- 33) Վերջ տուէ՛ք կեանքի մէջ հրթիռի պէս սլանալուն: Սորվեցէ՛ք

վայելել կեանքի իւրաքանչիւր վայրկեանը:

34) Վերջ տուէ՛ք «այո՛» ըսելուն, երբ կ'ուզէք «ոչ» ըսել:

35) Վերջ տուէ՛ք բարդացնելուն ձեր կեանքը: Ամէն ինչ շատ աւելի պարզ է, քան դուք իրավիճակը կը նկարէք ձեր գլխուն մէջ:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շարաքաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

Ապտալլա Կիւլը Կ'ուզէ Հայ Տնտեսագէտ Աճեմօղլուն Ընդգրկել Նոր Կուսակցութեան Հիմնադիր Կազմին մէջ



Թուրքիոյ մէջ կը շրջանառուին տեղեկութիւններ այն մասին, որ նախագահ Ռեճեփ Թայյէպ Էրտողանի գլխավորած իշխող «Արդարութիւն եւ զարգացում կուսակցութեան» շարք մը ներկայ ու նախկին անդամներ կը նախաձեռնեն ստեղծել նոր կուսակցութիւն:

«Հիմնադիրներ»-ի փոխանցմամբ, այդպիսով պնդումներ կան, որ Թուրքիոյ Հանրապետութեան 11-րդ նախագահ Ապտալլա Կիւլը կը ցանկայ նոր ստեղծուելիք կուսակցութեան հիմնադիր կազմին մէջ ներառել աշխարհահռչակ հայ տնտեսագէտ Տարօն Աճեմօղլուն: Վերջինս կը բնակի ԱՄՆ-ի մէջ:

Կը նշուի, որ կուսակցութիւնը պիտի ղեկավարէ Թուրքիոյ նախկին արտաքին գործոց նախարար Ալի Պապաճանը:

Աղբիւրի փոխանցմամբ՝ Պապաճանի ղեկավարութեամբ իրականացուող գործընթացներուն մէջ բացի Կիւլէն կան նաեւ արդարադատութեան նախկին նախարար Սատուլլա Էրկիւնը, ներքին գործոց նախկին նախարար Պեշիւր Աթա-

լալը եւ լրագրող Ֆեհմի Քորուն: Թրքական աղբիւրը հետեւեալ կերպ անդրադարձած է Տարօն Աճեմօղլուի հանգամանքին.

«Այն ժամանակ, երբ Կիւլը նախագահ էր, Աճեմօղլուն «Մշակույթի եւ արուեստի» մետալով պարգևատրած էր: Կիւլը կը ցանկայ, որ Աճեմօղլուն զբաղի նոր կուսակցութեան «տնտեսական» հարցերով: Աճեմօղլուն աշխարհի մէջ ամէնէն շատ մէջբերուող առաջին 10 տնտեսագէտներէն մէկն է: Ան կը դասախօսէ ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգի Արհեստագիտական հիմնարկին մէջ: Հայ ընտանիքի գաւառ Աճեմօղլուն Թուրքիոյ Օզալի նախագահութեան ժամանակ ամուսնացած էր պետական նախարար Իսմայիլ Օզտաղլարի աղջկան հետ»:

Յիշեցնենք, որ Թուրքիոյ 11-րդ նախագահ Կիւլը եւ նախկին վարչապետ Ահմեթ Տաւութօղլուն, որոնք եղած են իշխող AKP-ի հիմնադրման ակունքներուն, աւելի վաղ յայտնած էին նոր կուսակցութեան ստեղծման մասին:

Վարչապետը Խփել է Թիրախին

Շարունակուած էջ 2-էն

Այդ նպատակի ծառայութեան են դրուել բոլոր ռեսուրսները, այդ թուով հեռուստատեսութիւնը, որն իր ազդեցութիւնն է թողել ընդհուպ մանկական տարիքային շրջանակներէ վրայ:

Հայաստանում արդիականացման, զարգացման հարցում առաջընթացի եւ յաջողութեան հիմնարար խնդիրներէ մէկը քրէական ենթամշակույթի չէզոքացումն է: Ըստ այդմ, քրէական ենթամշակույթի դէմ պայքարի ծանրութեան կեդրոն պէտք է դառնայ նաեւ խորհրդարանը, ընդ որում երկու

ուղղութեամբ էլ, որովհետեւ ակնյայտօրէն առկայ է օրէնսդրական խստացումների մեծ անհրաժեշտութիւն:

Թաւաշայ յեղափոխութիւնը զգալիօրէն չէզոքացրել է քրէական տարրի դերը քաղաքականութեան մէջ: Բայց, մի բան է չէզոքացնել քրէական տարրը քաղաքականութեան մէջ, մէկ այլ բան՝ չէզոքացնել հանրութեան մէջ եղած դրա ենթամշակութային առկայութիւնը: Այլ լապէս, այն ժամանակի ընթացքում կարող է «ասֆալտ ծակել»:

«ԼՐԱԳԻՐ»

Մի Քանի Անգամ Բանտախուց Գնացած Ու Վերադարձած

Շարունակուած էջ 2-էն

Նախօրէին նախագահի աշխատակազմի ղեկավարի անունից Պողոսեանին զանգել են եւ կանչել նախագահական: Ըստ Պողոսեանի յայտնածի՝ ՄԴ-ի իր գործընկերներից նուազագոյնը երեքը Մարտի 4-ին նմանատիպ զանգեր էին ստացել նախագահականից: Սրանից աւելի՛նչ ճնշման մասին էր ցանկանում լսել Քոչարեանը: Արդեօք ՄԴ դատաւորի վրայ գործադրած ճնշումը ճնշում չէ՞, թէ՛ մոռացել է 10 տարի առաջ կատարուածի մասին, որ դատարանները առանց նախա-

զահականի թոյլտուութեան նոյնիսկ միջնորդութիւն չէին քննարկում: Ու այսօր աւելի շատ են հնչում կարծիքները, որ դատարաններում զանգովի արդարադատութեան համակարգը սկիզբ է առել Լեւոն Տէր-Պետրոսեանի իշխանութեան տարիներին, ծաղկել ու բարգաւաճել Ռոբերտ Քոչարեանի օրօք, իսկ Սերժ Սարգսեանի կառավարման տարիներին ուղղակի դարձել էր օրինաչափութիւն: Ուղղակի լաւ կը լինի, որ նախկին ղեկավարները, մասնաւորապէս՝ այսօրուայ ընդդիմադիր Ռոբերտ Քոչարեանը, իր անցեալը չմոռանայ:

ԱՄՆ-ն կը Մեծցնէ Դէպի Հայաստան Ֆինանսական Օգնութիւնը

Կառավարութիւնը իր նիստին որոշում կայացուցած է հաւանութիւն տալ ՀՀ կառավարութեան եւ ԱՄՆ կառավարութեան միջեւ 2019-ի Մայիս 8-ին ստորագրուած «Աւելի մրցունակ եւ զանազանեցուած մասնաւոր հատուածի շուրջ» օժանդակութեան համաձայնագրի թիւ 12 փոփոխութիւնը հաստատելու մասին ՀՀ նախագահի հրամանագրի նախագիծին:

Որոշման հիմնաւորման մէջ նշուած է.

«Աւելի մրցունակ եւ զանազանեցուած մասնաւոր հատուածի ձեւաւորման նպատակով ԱՄՆ-ի կառավարութեան կողմից ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալութեան միջոցով Հայաստանի Հանրապետութեան կառավարութեանը օժանդակութիւն տրամադրելու նպատակով 2010թ. Օգոստոսի 6-ին կնքուել է «Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան եւ Ամերիկայի Միացեալ Նահանգների կառավարութեան միջեւ աւելի մրցունակ եւ զանազանեցուած մասնաւոր հատուածի շուրջ օժանդակութեան մասին» համաձայնագիրը:

Այնուհետեւ, ամերիկեան կողմից լրացուցիչ ֆինանսական յատկացումների իրականացման նպատակով մշակուել է 2010-2018թթ.

ընթացքում ստորագրուել են վերոնշեալ համաձայնագրի փոփոխութիւններ թիւ 1-12-ը:

Նիւթական յատկացումները իրականացուել են մասնաւոր հատուածի զարգացման, ֆինանսական ոլորտի օժանդակութեան եւ ենթակառուցուածքների ծրագրային ոլորտների ներքոյ:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալութեան կողմից ներկայացուած թիւ 12 փոփոխութեամբ նախատեսուած է լրացուցիչ 7,449 միլիոն ԱՄՆ տոլարի չափով ֆինանսական յատկացումների իրականացում, որն ուղղուելու է ենթակառուցուածքների, գիւղատնտեսութեան, զբօսաշրջութեան ոլորտներում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալութեան կողմից իրականացուելիք ծրագրի ֆինանսաւորմանը:

Արդիւնքում ամերիկեան կողմի տրամադրած դրամաշնորհների ընդհանուր գումարը «Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան եւ Ամերիկայի Միացեալ Նահանգների կառավարութեան միջեւ աւելի մրցունակ եւ զանազանեցուած մասնաւոր հատուածի շուրջ օժանդակութեան մասին» համաձայնագրի շրջանակներում կը կազմի 80,7 միլիոն ԱՄՆ տոլար»:

Պոլսոյ Հայաստանցիները

Շարունակուած էջ 6-էն

ձայն մըն ալ կայ: Ասիկա դամբանախօսութիւն ընող հոգեւորականին ձայնն էր: Կուռ ձայնով լաւ հռետոր մը, որ այդ պահուն կը խօսէր բարիքի եւ չարիքի մասին: Կը յիշեցնէր, որ մարդիկ բարիքէ պէտք չէ հեռանան, բայց պէտք չէ մոռնան նաեւ, որ չարիքը գոյութիւն ունի: Յետոյ կը յանձնարարէր, որ համայնքը չհաւատար բամբասանքներուն:

»Ինչ որ լսեցիք մինչեւ հիմա, մոռցէք«, կ'ըսէր ան: »Մենք հիմնովին կը վստահինք ապահովութեան մեր ուժերուն, անոնք մեզի համար կ'աշխատին«, կ'ըսէր ան: Եկեղեցիին բակը խորունկ լուծիւն մը կը սեղմէր կոկորդս:

Մինչ քիւրտերը ունէին կուսակցութիւն մը, որու շնորհիւ կրնային այսքան գուլումի դիմաց աննկուն կերպով կանգուն կենալ, մինչ ունէին գինեալ ուժեր, որոնք կը ստիպէին, որ պետութիւնը բանակցութեան սեղան նստի, անդին այս երէց, միջին տարիքով կամ երիտասարդ հայերը, որպէսզի կարենային ապրիլ այս երկրին մէջ, պէտք ունէին հաւատարմ հոգեւորականին ըրած յանձնարարութիւններուն: Որովհետեւ անոնք ասաւոր

առանձնութեան մը մէջ էին: Իրենց թուրք բարեկամները, որոնք ամէն անգամ որ հայու խօսք ըլլար, այնքան գովասանքով կը խօսէին Հրանդ Տինքի մը մասին, եւ այն հարիւր հազարները, որոնք քալեցին Հրանդ Տինքի յուղարկաւորութեան ընթացքին, ոչ միայն չէին կրնար դարմանել այդ առանձնութիւնը, այլ նաեւ կը փաստէին այդ առանձնութեան խորութիւնը:

Լա՛ւ, ապա այն տարբերութիւնը, որ կայ թուրք ազգայնապաշտներու սաստկութեան ենթակայ դարձած երկու ժողովուրդներու՝ քիւրտերու եւ հայերու միջեւ: Ի՞նչ տարբերութիւն կայ քիւրտերու բնակչութեան, քաղաքական եւ գինուորական ուժերուն եւ հայերուն առանձնութեան միջեւ: Այս աշխարհագրութիւնը ատենօք միասնաբար ապրող քիւրտերուն ու հայերուն հայրենիքն էր, բայց հայերը ոչնչացուեցան հոնկէ, եւ եթէ այսօր քիւրտերը գուլումին դէմ դիմադրելու ուժ ստացան եւ այդ ուժը զօրացուցին, ասիկա բնականաբար կապ մը ունի հայերու ոչնչացման յիշողութեան հետ: Կ'արժէ, որ բոլորս ալ մտածենք այս կապին մասին:

Նիւթը հրապարակութեան պատրաստեց՝ Սազո Արեան

NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

MEMBER

Garine Depoyan

626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepoyan@gmail.com

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Մարի Մանկրեանի մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու աշխատակազմը իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար **Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Սալբի Մանկրեանին:**

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը խոր ցաւով կը սգայ **Տիկին Մարի Մանկրեանի մահը եւ իր ցաւակցութիւնները կը յայտնէ Մանկրեան, Պէրպէրեան, Շանթեան ընտանիներուն եւ մասնաւորաբար հանգուցեալի զաւակին՝ **Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Սալբի Մանկրեանին:****

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Հայկական Կրթական Բարեսիրական Միութիւնը խոր ցաւով կը սգայ **Մարի Մանկրեանի մահը եւ իր ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի զաւակներուն եւ համայն հարազատներուն, մասնաւորապէս **Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Սալբի Մանկրեանին:****

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Հանգուցեալ Մարի Մանկրեանի մահուան առիթով **Հ.Մ.Մ. վարչութիւնն ու Տիկնանց Օժանդակ Մարմինը** իրենց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի համայն հարազատներուն, մասնաւորաբար **Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Սալբի Մանկրեանին:**

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Մարի Մանկրեանի մահուան տխուր առիթով **Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան** իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի զաւակներուն եւ համայն հարազատներուն, մասնաւորաբար **Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Սալբի Մանկրեանին:** Առ այդ փոխան ծաղկեպսակի 100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Մարի Մանկրեանի մահուան տխուր առիթով **Տէր եւ Տիկ. Տիգրան եւ Վարդուհի Սարաֆեան** իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի բոլոր հարազատներուն, մասնաւորապէս **Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Սալբի Մանկրեանին:** Առ այդ փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուիրատուութիւնները կը կատարեն՝ «Մասիս»ին 50 տոլար, **Հ.Մ.Մ.**ին 50 տոլար:

Սրբազան Քահանայապետ Ֆրանիսքոս Պապին Այցը Հայաստան

Շարունակուած էջ 15-էն

լիկներու ծննդոցը: Վազգէն Հայրապետ արտասահմանէն երեք արքեպիսկոպոսներէ բաղկացած պատուիրակութիւն մը լղեց Վատիկան Յովհաննէս-Պօղոս Բ. Սրբազան Պապին իր բողոքը յայտնելու համար, եւ իսկոյն պատուիրեց պատշաճ պատասխան մը գրել տալ ու հրապարակել, գործ մը որ գլխուս պայթեցաւ մինչ կը հովուէի Ֆլորիտայի Ս. Դաւիթ եկեղեցւոյ համայնքը: Գրութիւնս այն ատեն լոյս տեսաւ «Էջմիածին» ամսագրին եւ այլ շաբաթաթերթերու մէջ:

Էջմիածնի Մայր Տաճարին Մէջ Սրբազան Քահանայապետը ուղղակի Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար մուտք գործեց հանդիսաւոր թափօրով, օղակայանէն ուղղակի Մայր Աթոռ առաջնորդութեան շարք մը վատիկանեան կարտինալներու եւ պետական անձանց հետ միասին, Հայաստանի Հանրապետութեան Նախագահին եւ աւագանին, գլխաւորութեամբ Ամենայն Հայոց Ս. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին: Տաճարի մուտքին, համբուրելէ ետք իջման Ս. Սեղանը, Սրբազան Քահանայապետը բարձրացաւ Աւագ Խորան ու բազմեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւերով իրեն յատուկ գահին վրայ: Երկու հովուապետները իրենց

ճառերը արտասանեցին ու Սրբազան Քահանայապետը եղաւ Գարեգին Բ Կաթողիկոսին հիւրը՝ վեհաբանի իրեն յատուկ յարկաբաժնին մէջ, ինչպէս եղած էր նախկին Պապի այցելութեան պարագային: Հայաստանի պետական կառուցը ընդունելութիւն սարքեց Ազատութեան Հրապարակին վրայ, գեղարուեստական պատշաճ յատագիրով: Հռոմի քահանայապետը պաշտօնական շքերթով այցելութեան բարձրացաւ Ծիծեռնակաբերդ, ուր աղօթեց եւ ծաղկեպսակ գետեղեց Նահատակաց ԅրեւանի մասին: Ամենայն Հայոց Կաթողիկոսին ու Հանրապետութեան Նախագահին առաջնորդութեամբ: Երեւանէն Կիւմրի, Էջմիածնէն Ծիծեռնակաբերդ, եւ ապա Խոր Վիրապ, պահ մը մաքուր գեփիւռ մը զովացուց մեր երկիրը՝ բարոյական եւ հոգեւոր ներգործութեամբ որուն շատ պէտք ունէր մեր հայրենիքը:

Քահանայապետը Կիւմրիի Մէջ Սրբազան Քահանայապետը բնականօրէն հայ կաթողիկէներուն յատուկ ուշադրութիւն պէտք էր դարձնէր, ու այդ կատարուեցաւ Կիւմրիի մէջ իր մատուցած բացօդային եւ տպաւորիչ Ս. Պատարագին, ի ներկայութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ եպիսկոպոսաց ղապիսին: Ներկայ էին նաեւ Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր-Պետրոս 20-րդ նորընտիր Պատրիարքը եւ թեմին առաջ-

Պէյրուսի Մէջ իր Մահկանացուն Կնքած է ՀՄՄ-ի Նուիրեալներն՝ Վանիկ Ռեզեան

Պէյրուսի մէջ իր մահկանացուն կնքած է ՀՄՄ-ի նուիրեալ անդամներէն Վանիկ Ռեզեանը:



Երիտասարդ տարիքէն ՀՄՄ-ի անդամակցած Ռեզեան եղած է անդամ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան:

Ան նաեւ աշխույժ գործունէութիւն տարածած է ՍԳՀԿ-ի հովանաւորութեան տակ գործած «Ռատիօ Նայիրի» կայանի գործունէութեան ժամանակ:

1968-ի ծնունդ վանիկ Ռեզեանի վերջին հրաժեշտի արարողութիւնը կատարուեցաւ Չորեքշաբթի 3 Յուլիսին Պէյրուսի Նոր Հաճըն թաղամասի Սուրբ Գէորգ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատուն:

Հանգուցեալը որդին էր ՀՄՄ-ի ֆուլթայոլի ոլորտին մէջ յայտնի անուն հանդիսացող եւ երկար տարիներ բեղուն գործունէութիւն ծաւալած Կարպիս Ռեզեանին:

Կան Սուրբ Պատարագին Գարեգին Բ. Կաթողիկոսին կողմէ, բացօդայ Ս. Տրդատ Խորանին վրայ՝ ի ներկայութեան Հանրապետութեան Նախագահին, Կարտինալներուն, բարձրաստիճան հոգեւորականներուն եւ հազարաւոր հայրդիներուն: «Ողջոյն»ի պահուն երկու հովուապետները ողջագուրուեցան եւ ապա ողջոյնը բաշխուեցաւ հոգեւորականներու միջոցաւ համայն ժողովուրդին: Սրբազան Քահանայապետին ծրագիրն էր նաեւ այցելել Խոր Վիրապի վանքը իր յարգանքը մատուցանելու բազմաչարչար Ս. Գրիգոր Լուսաւորչին, ուրկէ Սրբազան Պապն ու Հայոց Կաթողիկոսը դէպի Արարատ Լեռ խաղաղութեան աղանիններ թուցուցին: Ապա՝ ուղղակի Չուարթնոց օդակայան ուղեւորելով, պետական պատշաճ արարողակարգով Սրբազան Քահանայապետը բարձրացաւ օդանաւ մեկնելու Հռոմ:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Կարապետ Հայթայեանի մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթն ու յարակից կառույցները իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն Հայթայեան եւ Սեփեթեան ընտանիքներուն, մասնաւորաբար՝ հանգուցեալի այրիին **Տիկ. Էլիզ Հայթայեանին:**

Նորդ Ռաֆայէլ Արք. Մինասեան:

Պէտք է Յիշել այստեղ թէ 1910-ական թուականներուն, եւ ոչ անկէ առաջ, հայ կաթողիկէներ կային Վրաստանի եւ Հայաստանի հիւսիսային շրջաններուն մէջ ուր թեմական վիճակ մը հաստատած էին 1909-էն մինչեւ 1921, երբ Սովետները քայքայեցին կրօնական բոլոր հաստատութիւնները: 70 տարի ետք միայն 1991-ին Հռոմի Քահանայապետին որոշումով եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ս.Տ. Վազգէն Ա Հայրապետին հաւանութեամբ կազմակերպուեցաւ Հայաստանի, Վրաստանի, եւ Արեւելեան Եւրոպայի միացեալ Հայ Կաթողիկ թեմը, կեդրոն ունենալով Կիւմրին:

Հայրապետական Պատարագ Ֆրանսիական Սրբազան Քահանայապետը Մայր Աթոռ վերադարձին ներկայ եղաւ ի յարգանս իրեն մատուցուած Հայրապետա-

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State: ----- Zip Code: -----
Country: -----
Tel: ----- Email: -----

ՄԱՐԶԱԿԱՆ

5 Ոսկի, 3 Արծաթ, 3 Պրոնզ. Հայաստանի Մարզիկներու Մետալային Փայլը Եւրոպական Խաղերուն




Մինչքի մէջ աւարտած են երկրորդ Եւրոպական խաղերը, որուն 15 մարզաձեւերով մասնակցած են 43 երկրի 4000 մարզիկ:

Եւրոպական խաղերուն Հայաստանի Հանրապետութիւնը ներկայացուցած են 37 մարզիկներ 9 մարզաձեւերու մէջ: Հայ մարզիկները նուաճած են 11 մետալ, այդ շարքին՝ 5 ոսկեայ, 3 արծաթեայ 3 պրոնզէ:

- Մասնաւորապէս ոսկեայ մետալ նուաճած են՝
 - Տիգրան Կիրակոսեանը (սամպո),
 - Արթուր Յովհաննիսեանը (բոնցքամարտ),
 - Յովհաննէս Պաշքովը (բոնցքամարտ),
 - Արթուր Ալեքսանեանը (ըմբշամարտ),
 - Արթուր Դաւթեանը (մարմնամարզութիւն),
 - Արծաթեայ մետալ՝
 - Կարապետ Չալեանը (ըմբշամարտ),
 - Վահագն Դաւթեանը (մարմնամարզութիւն),
 - Դաւիթ Գրիգորեանը (սամպո)
 - Պրոնզէ մետալ՝
 - Արսէն Ղազարեանը (սամպո),
 - Գոռ Ներսէսեանը (բոնցքամարտ),
 - Կարէն Տօնականեանը (բոնցքամարտ):
- Մետալային հաշուարկին մէջ Հայաստանի հաւաքականը զբաղցուցած է 11-րդ տեղը: Մինչքի «Տինամօ» մարզադաշտին մէջ տեղի ունեցած փակման հանդիսաւոր արարողութեան ժամանակ Հայաստանի պատուիրակութեան դրօշակակիրը բոնցքամարտիկ Յովհաննէս Պաշքովը եղած է, որ դարձած է Եւրոպական խաղերու ախոյեան 64 քկ քաշային կարգին: Փակման արարողութեան ներկայ եղած են Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեանը, ՌԴ նախագահ Վլատիմիր Փութինը, Պելաուոսիայի նախագահ Վլատիմիր Լուքաշենքօն:

Գուարդիոլա. Ախոյեանների Լիգայի Նոր Ձեւաչափը Կը Սպանի Ազգային Առաջնութիւնները

Անգլիայի ախոյեան «Մանչեսթեր Սիթի» կատարունացի գլխաւոր մարզիչ Խոսեպ Գուարդիոլան դէմ է Ախոյեանների Լիգայի ձեւաչափի հնարաւոր փոփոխութիւններին: Ֆուտպոլային ակումբների եւրոպական ասոցիացիան առաջարկել է հաստատել նոր ձեւաչափը 2024-2025 թուականների մրցաշրջանից:



«Ես դէմ եմ այդ գաղափարին: Դրանով մենք կսպանենք ազգային առաջնութիւնները: Եթէ «Ռեալ» ու «Բարսելոնան» հեռանան՝ Լա Լիգան կը մահանայ: Ոչ ոք չի հետաքրքրուի խումբերով, որոնք չունեն եւրոպական լիգայում յայտնելու հնարաւորութիւն:»

Անգլիայում նոյնիսկ չորրորդ դիւրիտի խաղերի ժամանակ տրիբունաներում ազատ տեղ չի լինում: Անգլիայում թույլ չեն տա սպանել տեղի ֆուտպոլը:

Ամէն շաբաթ Ախոյեանների Լիգայի հանդիպում անցկացնելով՝ խաղերը կը կորցնեն գրաւչութիւնը», - Գուարդիոլայի խօսքը մէջբերում է Goal.com-ը:

Ֆուտպոլային ակումբների Եւրոպական ասոցիացիայի առաջարկով Ախոյեանների Լիգայում պէտք է խաղան միայն սուպերակումբներ, որոնք նախկինում յաջողութիւններ են ունեցել այս մրցաշարում: Նախատեսում է խմբային փուլի հանդիպումները 6-ից աւելացնել մինչեւ 14:

Ամերիկայի Գաւաթ. Լուիս Սուարեսի Կրիպման Հետեւանքով Ուրուգուայը Դուրս Մնաց Պայքարից



Պրագլիիայում անցկացուող ֆուտպոլի Ամերիկայի գաւաթի խաղարկութեան կիսաեզրափակիչի վերջին ուղեգիրը նուաճեց Պերուի հաւաքականը, որը յետխաղեայ 11 մեթրանոցներով պայքարից դուրս թողեց ուրուգուայցիներին:

Հիմնական ժամանակն աւարտուեց ոչ ոքի՝ 0:0: Ուրուգուայցիները երեք անգամ գրաւեց Պերուի թիմի դարպասը, սակայն երեք դէպքում էլ գրանցուեց խաղից դուրս վիճակ:

11 մեթրանոցներն աւելի յաջող իրացրին Պերուի թիմի ֆուտպոլիստները՝ 5:4:

Ուրուգուայի հաւաքականի կազմում հենց առաջին հարուածը ձախողեց «Բարսելոնայի» յարձակուող Լուիս Սուարեսը: Դարպասապահը հետ մղեց հարուածը:

Յունիսի 4-ին կայանալիք կիսաեզրափակիչի խաղում Պերուն կը մրցի Չիլիի խումբի հետ, որը պայքարից դուրս էր թողել Քոլումբիայի հաւաքականին:

Արժենթինացի Եւ Պրագլիը Դուրս Եկան Կիսաեզրափակիչ

Ամերիկայի Գաւաթ. Արժենթինացի դուրս եկաւ կիսաեզրափակիչ, որտեղ կը հանդիպի Պրագլիիային

Արժենթինացի հաւաքականը նուաճեց Պրագլիիայում անցկացուող Ամերիկայի գաւաթի խաղարկութեան կիսաեզրափակիչի ուղեգիր: Ռիոյի «Մարական» ստադիոնում տեղի ունեցած խաղում արժենթինացիները 2:0 հաշուով առաւելութեան հասան Վենեզուելայի հաւաքականի նկատմամբ:

10-րդ րոպէին կոլի հեղինակ դարձաւ Միլանի «Ինտերի» յարձակուող Լաուտարօ Մարտինեսը, որը կրկնով յետադարձ հարուած է կատարել «Մանչեսթեր Սիթիի» յարձակուող Սերխիօ Ագուերոյի փոխանցումից յետոյ:

74-րդ րոպէին «Բետիսի» կիսապաշտպան Զովանի Լօ Չելսոն կրկնապատկեց հաշիւը՝ օգտուելով դարպասապահի սխալից:

Յունիսի 3-ին կայանալիք կիսաեզրափակիչում Արժենթինացի կը մրցի Պրագլիիայի հաւաքականի հետ, որը յետխաղեայ 11 մեթրանոցներով յաղթել էր Պարագուային:

Մեսսի՝ Միջազգային Կարիերան Աւարտելու Շանսերն Աճում Են



Copa America-2019-ում աւարտուել է խմբային փուլը: Արժենթինացի հաւաքականը մեծ դժուարութեամբ կարողացաւ դուրս գալ փլեյ-օֆֆ: Սակայն փորձագէտները կարծում են, որ Լիոնել Մեսսիին եւ ընկերները հազիւ թէ կարողանան յաղթել մրցաշարը, իսկ դա նշանակում է՝ մեծանում է այն բանի հաւանականութիւնը, որ Ալբերտեստեի աստղային յարձակուողը կը յայտարարի միջազգային կարիերայի աւարտի մասին:

Մինչեւ Յունիսի 15-ը Մեսսիի՝ հաւաքականում կարիերան աւարտելու վրայ խաղադրոյք կատարելու գործակիցը 4.00 է, ինչը հաւասար է 23 տոկոս հաւանականութեան: Մրցաշարի մեկնարկից առաջ նման իրադարձութեան վրայ խաղադրոյք կատարել հնարաւոր էր 5.80 գործակցով: Իսկ հաւանականութիւնը, որ Մեսսին նման յայտարարութիւն չի անի, գնահատուած է 1.20 գործակցով (77 տոկոս):